ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

«ԳՅՈՒՄՐՈՒ N18 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՄՐԻ 2023

Բովանդակություն

1. Բովանդակություն ---------- 2
2. Ներածություն---------- 3
3. Առաքելություն ---------- 4
4. Դպրոցի բնութագիրը ---------- 6
5. Դպրոցի առկա իրավիճակը ---------- 7
6. Տեղեկանք ըստ քարտարանի 31/12/22 (ֆինանսական) ---------- 10
7. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր ---------- 17
8. Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը ---------- 19
9. Աշակերտական համակազմ ---------- 22
10. Աշխատակազմ ---------- 29
11. Աշխատանք մանկավարժական համակազմի հետ ----------32
12. Չափորոշիչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն ---------- 33
13. Ներդպրոցական վերահսկողություն ---------- 34
14. Բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն ---------- 38
15. Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, շահառու կազմակերպությունների, կրթության կառավարման մարմինների հետ ---- 41
16. Ուսումնական սոցիալական միջավայր ---------- 43
17. Տեխնոլոգիաներ և նորարարություններ ---------- 44
18. Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում ---------- 45
19. Մասնագիտական կողմորոշման դասընթացների կազմակերպում ---------- 46
20. Ռազմահայրենասիրական դաստիարակություն ---------- 46
21. Դպրոցի տնօրենի կադրային քաղաքականությունը ---------- 47
22. Աշխատակազմի արժևորում և խրախուսում ---------- 48
23. Մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործում ---------- 49
24. Հալածանքի, օտարման, բռնության կանխարգելումը դպրոցում ---------- 51
25. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը ---------- 52
26. Վերահսկողության մեխանիզմները ---------- 56
27. Դպրոցի հիմնական խնդիրների լուծման ուղիները, պատասխանատուներն ու կատարման ժամանակացույցը ---------- 56
28. Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները---------- 60
29. Դպրոցի զարգացման ծրագրից ակնկալվող արդյունքները ---------- 61
30. Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողությունը---------- 62

Ներածություն

Դպրոցի զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է: Այն արտացոլում է դպրոցում առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսվող աշխատանքների համառոտ նկարագիրը և տեսլականը:

Ստորև ներկայացված է «Գյումրու N18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը 2023-2028թթ համար: Ծրագրում ներառված է տեղեկություններ դպրոցում առկա խնդիրների, թույլ և ուժեղ կողմերի, հնարավորությունների ու ռիսկերի մասին: Այս ծրագիրը առաջարկում է առկա խնդիրների լուծման նոր տարբերակներ, նոր ռեսուրսների ներդրման և դրանց հիման վրա դպրոցը հզորացնելու ուղիներ:

Պարբերաբար իրականացվող կրթական բարեփոխումները իրենց մեջ ներառում են և՛ ազգային արժեհամակարգի առանձնահատկությունները, և՛ համաշխարհային զարգացումների մարտահրավերները: Ուստի կարևորվում է ժամանակի հրամայականին համարժեք կրթական միջավայրի ձևավորումը, ինչը կենթադրի պետականամետ մտածելակերպ ունեցող, գալիք մարտահրավերներին դիմակայելու պատրաստ քաղաքացու ձևավորմանը: Կարևորում ենք ժամանակի արդի պահանջներին համարժեք կրթական միջավայրի ապահովումը: Առաջիկա հինգ տարիների ցանկացած բարեփոխում կարծում ենք պիտի լինի փոխհամաձայնեցված գործընթաց, որին հավասարապես մասնակցելու է դպրոցը, ծնողն ու աշակերտը՝ կարևորելով ու առաջնային համարելով սովորողի շահն ու վերջնարդյունքում համակողմանիորեն կրթված, դաստիարակված սերունդ ունենալը: Դպրոցի զարգացման ծրագիրը հանդես է գալիս որպես դպրոցի ռազմավարության պլանավորում, որը տնօրենության, աշխատակազմի, աշակերտների և ծնողների համակարգված ու փոխհամաձայնեցված աշխատանքի քայլերն են առաջիկա հինգ տարիների ընթացքում: Ռազմավարությունն ունի առաքելությանը հավատարիմ, չափելի ժամանակահատվածում հասանելի ծրագրերի փաթեթ, որն ուղղված է լինելու ավելի հարմարավետ դպրոց, ավելի հմուտ ուսուցիչներ, ավելի կայուն, զարգացած ու ժամանակի պահանջներին համընթաց քայլող աշակերտներ և բնականաբար մեր աշխատանքից ավելի գոհ ծնողներ ունենալուն: Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարվել է առկա իրավիճակի վերլուծություն, երևան են եկել դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վեր են հանվել առկա հիմնախնդիրները: Հանդիպումներ եմ ունեցել դպրոցի աշակերտական, ծնողական և մանկավարժական խորհուրդների հետ, որոնց դիտարկումները, առաջարկությունները, կարծիքները արտացոլել եմ դպրոցի զարգացման ծրագրում:

Առաքելություն

Առաջիկա հինգ տարիների ընթացքում մեզ համար կարգախոս ընտրելով գերմանացի մանկավարժ, փիլիսոփա, գրող, հասարակական և քաղաքական գործիչ Ադոլֆ Դիստերվեգի խոսքերը՝ «Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես»՝ ստեղծել համապատասխան կրթական միջավայր, որտեղ աշակերտը կկարողանա նոր ներդրվող չափորոշիչներին համապատասխան ապահովել վերջնարդյունքները, ձեռք բերել գիտեցածը ճիշտ ու գրագետ օգտագործելու հմտություն: Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, կրթության անհատականացման շնորհիվ որակյալ կրթություն ստանալու համար ձևավորել անհրաժեշտ պայմաններ, ստեղծել հետագա կյանքում սովորողների ինքնահաստատման, անհրաժեշտ հմտությունների ու կարողունակությունների ձեռքբերման և հաջողակ դառնալու համար բարենպաստ կրթական միջավայր:

Ծրագիրը հետապնդում է հետևյալ առաջնային նպատակները.

1. կրթության որակի բարելավում
2. կրթության մեջ ոչ միայն գիտելիքի, այլև կարողունակությունների կարևորում, որոնք այսուհետև պարտադիր են հանրակրթության պետական չափորոշչով
3. համակողմանի և հետևողական աշխատանքի արդյունքում կրթության որակի բարձրացում, ինչը կրթության ոլորտում հիմնական գերակայություններից մեկն է
4. աշակերտակենտրոն միջավայրի ստեղծում
5. բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում
6. թե՛ աշակերտների, թե՛ աշխատակազմի շրջանում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորում
7. դպրոցի վարկանիշի բարձրացում, արատավոր երևույթների բացառում
8. կրթական բոլոր աստիճաններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքի ապահովում
9. մասնագիտական կողմնորոշմանը միտված աշխատանքների ծավալում և իրականացում
10. սովորողների արժեքային համակարգի ձևավորում
11. արտադասարանական միջոցառումների և դասերի անցկացում
12. արտադպրոցական խմբակների ձևավորում
13. նյութատեխնիկական բազայի հարստացում

14. տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնում և զարգացում
15. դպրոցը դառնա մենթոր դպրոց

Զարգացման ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի 35-Ն հրամանում արձանագրված պահանջների ու ձևաչափի համապատասխան։ Զարգացման ծրագրի հիմք են հանդիսանում հանրակրթության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը՝ Հայաստանի Հանրապետության «Սահմանադրություն», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» և այլ օրենքներ, Հանրակրթության պետական չափորոշիչը, ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծրագիրը, նոր չափորոշիչները և իհարկե ներառված են մանկավարժական,ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները։

Դպրոցի բնութագիրը

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու N18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի Լազոյի 2:

Հիմնադրվել է 1948թ. որպես միջնակարգ դպրոց

Ներկայիս շենքում դպրոցը գործում է 2000 թվականից

Շենքի մակերեսը 2060 քմ, նկուղային հարկի ընդհանուր մակերեսը-1121 քմ

Դպրոցին կից մաքրվող տարածք-6828քմ

ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում գրանցվել է 02.05.2003թ. անժամկետ:

Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք: Ունի ինքնուրույն հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ:

Շենքը տիպային է, երկհարկ:

Դպրոցն աշխատում է մեկ հերթով:

2023-2024 ուստարում դպրոցում սովորում է 434 աշակերտ՝ 176 տարրական, 177 հիմնական և 76 ավագ:

2022-2023 ուստարում 12-րդ դասարանը ավարտել է 26 աշակերտ:

Աշխատակազմը՝ 53 աշխատող, որից 30-ը՝ ուսուցիչ՝ բարձրագույն և համապատասխան մասնագիտական կրթությամբ:

Էլ. հասցե gyumri18@schools.am , gyumri18dproc@gmail.com, Facebook – Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց

/https://www.facebook.com/profile.php?id=100075797563767

Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային ռեժիմով, միահերթ :

Դպրոցը ստեղծվել է 1948 թվականին Նորավան թաղամասում՝ այդ տարիներին հայրենիք ներգաղթած հայրենադարձների համար: 1988 թվականի Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո կառուցվել է նոր մասնաշենք:

Դպրոցի շրջանավարտներն այսօր գիտության և կրթության բնագավառի աշխատողներ են, սպորտի բնագավառում աչքի ընկած մարզիկներ, բանակին զինվորագրված ծառայողներ,արհեստների մեջ իրենց հետքը թողած մարդիկ, ովքեր միշտ էլ հպարտանում են իրենց հարազատ դպրոցով, ստացած որակյալ կրթությամբ և առանձնանում են հայեցի և համամարդկային բարձր արժեքներով: Դպրոցի աշակերտները մասնակցել են միջազգային կոնֆերանսների,մասնակցել են ամերիկյան FLEX ծրագրին, գրանցել հաջողություններ, ուսումնառությունը

շարունակել ԱՄՆ-ում ի դեմս ՀՀ նախկին փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի: Հանրապետական օլիմպիադաներում գրանցել են բարձր արդյունք (երկրորդ կարգի դիպլոմներ, գովասանագրեր): Դպրոցի անգլերենի բազմավաստակ ուսուցչուհի Լ. Խաչատրյանը մասնակցել է միջազգային բազմաթիվ կոնֆերանսների և սեմինարների: 2002-2004 թթ. մասնակցել է TEA ծրագրին և շահել է համակարգիչներ, տպիչ, պատճենահանման սարքեր, գրքեր:

2012 թվականին 9-10-րդ դասարանցիները մասնակցել են Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված <<Օլիմպիական գանձերի որոնում>> մրցույթին և գրավել երկրորդ տեղը: Դպրոցն իր գոյության 75 տարիների ընթացքում ունեցել է բազում ձեռքբերումներ և ամուր է իր սաներով, գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում թողած մնայուն արժեքներով:

Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը՝ դպրոցի կանոնադրությունը, կանոնակարգվող իրավական ակտերը, տեղայնացված օրինակելի իրավական ակտերը, ներքին իրավական ակտերը:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2019 թվականի մայիսի 10-ին ՀՀ Շիրակի մարզպետի թիվ 181-Ա որոշմամբ:

ԴՊՐՈՑԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ
Շենքային պայմանները

Կաբինետներ	Քանակը	Վիճակը
Դասասենյակ	20	Բավարար
Ուսուցչանոց	1	Լավ
Համակարգչային սենյակ	1	Լավ
Լաբորատորիա	1	Բավարար
ՆԶՊ կաբինետ	1	Բավարար
Հանդիսությունների դահլիճ	1	Լավ
Մարզադահլիճ	1	Լավ
Գրադարան	1	Ոչ բավարար
Տեխնոլոգիայի կաբինետ	-	Առկա չէ
Աշխատասենյակ	4	Լավ
Բուժկետ	1	Լավ
Խոհանոց/ճաշարան	1	Կահավորված
Սանհանգույց	6	Բավարար

Արխիվ	1	Բավարար
Բուֆետ	-	Առկա չէ
Կաթսայատուն	1	Լավ
Ռեսուրս կենտրոն	1	Լավ

Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

- Շենքը գտնվում է լավ վիճակում, սեյսմակայուն է:
- Տանիքը որոշ հատվածներում ունի վերանորոգման կարիք, պատուհանները փոխված են մասնակի, կան փոխարինման ենթակա հին պատուհաններ, բակը բարեկարգ է, ցանկապատված:
- Թեքահարթակ առկա չէ, չկան հարմարեցումներ ԿԱՊԿՈՒ աշակերտների համար ո՛չ շենքի մուտքի մոտ, ո՛չ դպրոցի ներսում: Առաջնային խնդիրներից մեկը դիտարկվում է սկզբնական շրջանում գլխավոր մուտքի մոտ թեքահարթակի առկայության ապահովում, ապա, համապատասխան միջոցներ հատկացնելով, ներքին հարմարեցումների կազմակերպումը:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցում սովորում են ԿԱՊԿՈՒ աշակերտներ՝ կարևոր է նաև հոգեբանի առանձնացված ու կահավորված սենյակի առկայությունը:
- Դպրոցում գործում է 6 սանհանգույց, որոնցից 4-ի վիճակը լավ է, 2-ը վերանորոգման կարիք ունի:
- Ջեռուցումը լոկալ է, ունի կաթսայատուն:
- Մարզադահլիճ առկա է, բայց վերանորոգման կարիք ունի:
  Հանդերձարաններում չկան անհրաժեշտ հարմարեցումներ:
- Բացօթյա մարզահրապարակի համար կա տարածք, բայց մշակված ու կահավորված չէ:
- Հանդիսությունների դահլիճը վերանորգված է, գտնվում է լավ վիճակում:
- Դպրոցում բուֆետ առկա չէ, ինչը և՛ ծնողների, և՛ աշակերտների համար դպրոցի թույլ կողմ է դիտարկվել հավակնորդի հետ հանդիպման ժամանակ:
- Դպրոցում առկա է կահավորված ճաշարան/խոհանոց:
- Գործում է 1 լաբորատորիա բոլոր բնագիտական առարկաների համար, լաբորատոր սարքավորումներ առկա են, բայց հին են, ժամանակ առ ժամանակ ձեռք են բերվում նյութեր համապատասխան փորձեր անցկացնելու համար:
- Համակարգչային սենյակը կահավորված է, առկա է 27 համակարգիչ, բայց չի օգտագործվում դասերի ընթացքում, քանի որ նույն սենյակում տեղադրված է նաև <<Արմաթ>> լաբորատորիայի գույքը: Համակարգիչների ոչ լիարժեք օգտագործման

մասին բարձրաձայնել են և՛ աշակերտները, և՛ ծնողները հավակնորդի հետ հանդիպման ժամանակ: Ուստի առաջնային խնդիրներից է տեղափոխել ու կահավորել առանձին համակարգչային սենյակ և լիարժեք օգտագործել համակարգիչները ինչպես ինֆորմատիկայի, այնպես էլ այլ առարկաների ինտերակտիվ դասերի ընթացքում:

- ՆԶՊ-ի կաբինետին հատկացված տարածքը շատ փոքր է և ոչ բարեկարգ: Կարևորելով ռազմահայրենասիրական դաստիարակությունն ու արական սեռի աշակերտների պատրաստվածությունը ազգային բանակ զորակոչվելուց առաջ՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ավելի խորացված ու նպատակային դասեր ու միջոցառումներ կազմակերպելու համար:
- Դասարաններն ունեն վերանորոգման կարիք, առկա գույքը շատ հին է:
- Աշխատակազմի աշխատանքային սենյակները, ուսուցչանոցը գտնվում են բավարար վիճակում:
- Դպրոցում առկա է գրադարանի համար հատկացված սենյակ, որը որպես գրադարան կահավորված չէ, չկան ո՛չ գեղարվեստական գրքեր, ո՛չ էլէկտրոնային, չկա ընթերցասարահ: Ընթերցանությունը խթանելու համար կարևոր է ձևավորել ակումբներ՝ գրական, բանավեճի, կինոդիտման և այլն: Աշակերտական խորհրդին խրախուսել կազմակերպել գրական միջոցառումներ, ընթերցանության մրցույթներ և այլ արտադասարանական նախաձեռնություններ:
- Առանձնացված է փոքր տարածք բուժկետի համար, որը հագեցած չէ անհրաժեշտ գույքով և հարմարություններով:
- Դպրոցում չկան համապատասխան սենյակներ տեխնոլոգիայի դասերն անցկացնելու ո՛չ տղաների խմբերի, ո՛չ աղջիկների խմբերի համար: Անհրաժեշտ է համապատասխան միջավայր ապահովել համապատասխան դասանյութը հնարավորինս պրակտիկ ներկայացնելու և ուսուցանելու համար:
- Դպրոցում առկա չէ նաև փաստաթղթերը կոկիկ ու համակարգված արխիվացնելու համար անհրաժեշտ տարածք: Անհրաժեշտ է նաև համապատասխան կահավորումով արխիվի սենյակի առանձնացումը

Տեղեկանք ըստ քարտարանի - 31/12/22

Գույքային համար	Անվանում	քանակ	Միավորի սկզբնական արժեք	Միավորի Կուտակված մաշվածություն	Միավորի Հաշվեկշռային արժեք	Տեսակ
072729	Մինի համակարգչի հավաքածու Mini PC RS	5	125 700,00	48 108,97	77 591,03	611
072734	Համակարգչի հավաքածու (եռաչափ տպիչի	2	169 200,00	64 757,66	104 442,34	611
072736	Համակարգչային սեղան 1	1	24 584,00	9 409,00	15 175,00	629
072737	Համակարգչային սեղան 2	1	17 154,00	6 565,32	10 588,68	629
072738	Համակարգչային սեղան 3	6	14 667,00	5 613,49	9 053,51	629
072744	Համակարգչային աթոռ	16	6 390,00	2 445,64	3 944,36	629
072760	Եռաչափ տպիչ Բզեզ 2.0	1	366 000,00	160 089,85	205 910,15	611
072761	Փոշեկուլ GORENJE VC1411	1	19 000,00	7 271,84	11 728,16	622
072762	Ռոբոտ-կոնստրուկտորի հիմնական հավաքածու	1	244 000,00	106 726,57	137 273,43	619
072763	Նորացման ու գործիքների լրացուցիչ հավաքածու	1	243 000,00	93 003,02	149 996,98	622
072764	Ռոբոտի մեխանիկական և էլեկտրոնային հանգույցների լրա	1	245 000,00	93 768,48	151 231,52	622
072765	Ավտոմատացման ու էլեկտրոնիկայի ընդլայնման հավաքածու	1	243 000,00	93 003,02	149 996,98	622
072766	Թվային կառավարման շաղափային և լազերային հաստոց 1	1	347 000,00	132 806,79	214 193,21	622
072767	Աշակերտական սեղան-աթոռ	11	58 000,00	14 772,85	43 227,15	629
072778	Սեղանի համակարգիչ i3 8100	2	225 000,00	56 930,44	168 069,56	629
072780	Դյուրակիր Համակարգիչ ASUS X541N	1	178 000,00	51 472,35	126 527,65	611
072781	Մարմնամարզական ներքնակ	6	26 280,00	9 855,00	16 425,00	629
072787	Պտտաձող	1	166 800,00	62 550,00	104 250,00	629
072788	Մարմնամարզական պարան մագլցման համար	1	38 760,00	14 535,00	24 225,00	629
072789	Բարձրացատկի կանգնակներ և ձող	1	98 400,00	36 900,00	61 500,00	629
072790	Մարմնամարզական պատ	1	1,00	0,39	0,61	629
072791	Մարմնամարզական կամրջակ	1	1,00	0,39	0,61	629
072792	Աշակերտական սեղան-աթոռ	4	58 000,00	12 284,72	45 715,28	620
072796	Աշակերտական սեղան և աթոռներ	10	68 000,00	11 858,87	56 141,13	620
072806	Օֆիսի աթոռ	1	85 000,00	11 281,92	73 718,08	620

072807	բազկաթոռ	2	60 000,00	7 963,71	52 036,29	620
072809	Պատճենահանող սարք	1	230 000,00	23 927,42	206 072,58	619
072810	Պրոյեկտորի էկրան	1	110 000,00	14 304,44	95 695,56	619
072811	Պրոյեկտոր	1	310 000,00	46 071,42	263 928,58	611
072812	Աշակերտական սեղան, աթոռ	12	76 800,00	3 922,58	72 877,42	620
13110001	ՀԾ 7 ծրագիր	1	298 000,00	119 200,00	178 800,00	92
1743	շենք	1	95 320 000,00	3 812 800,00	91 507 200,00	101
013001	Բազմացնոն սարք Canon PC-860	1	0,10	0,08	0,02	619
013002	Համակարգիչ P-4	3	0,10	0,08	0,02	610
013005	Թվային պրոյեկ. InFous X2	1	0,10	0,08	0,02	611
013006	Հեռուստացուց Արայ	1	0,10	0,08	0,02	611
013007	Համակարգիչ P-4 խումբ ,,Աե	5	0,10	0,08	0,02	610
013012	Սպորտային հեծանիվ	1	14 500,00	11 600,00	2 900,00	629
013013	Սպորտային դահուկ	1	22 000,00	17 600,00	4 400,00	629
013014	Կոնքային վարժ.	1	18 000,00	14 400,00	3 600,00	629
013015	Վազքուղի	1	22 000,00	17 600,00	4 400,00	629
013016	Տյուներ	1	4 800,00	3 840,00	960,00	629
013017	Պրինտեր	1	4 200,00	3 360,00	840,00	619
013018	Բասկետբոլի վահանակ	2	16 200,00	12 960,00	3 240,00	629
013020	Տրամպլին	1	7 000,00	5 600,00	1 400,00	629
013021	Այծիկ մարզական	1	7 000,00	5 600,00	1 400,00	629
013022	Տեսաձայնագրիչ	1	2 000,00	1 600,00	400,00	619
013023	Համակարգիչ P-IV	2	11 200,00	8 960,00	2 240,00	610
013027	Համակարգիչ P –IV-q	1	20 000,00	16 000,00	4 000,00	610
013028	Համակարգիչ HP Compaq 8200 Elite	1	155 000,00	124 000,00	31 000,00	610
013029	Մոնիտոր 19	1	6 100,00	4 880,00	1 220,00	611
013029/1	Բազմաֆունկցիոնալ տպիչ HP Laserjet PRO	1	66 000,00	52 800,00	13 200,00	619
013030	Մոնիտոր 19	1	6 100,00	4 880,00	1 220,00	611
013030/1	Հոսանքի անխափան սնուցման սարք UPS	1	19 200,00	15 360,00	3 840,00	619
013031	Համակարգիչ 1 Dell Latitude E5550	2	297 500,00	238 000,00	59 500,00	610
013032/1	Canon MF 140	1	0,10	0,08	0,02	619
013033	Համակարգիչ 2 Dell Latitude E5550	20	211 300,00	169 040,00	42 260,00	610

013053	Ինտերակտիվ պրոյեկտոր NEC UM301 Wi	1	634 300,00	507 440,00	126 860,00	611
013054	Համակարգիչների լիցքավորման պահարան	2	152 700,00	122 160,00	30 540,00	620
013056	Wi-Fi	2	41 900,00	33 520,00	8 380,00	619
058	Համակարգչայի սեղան	12	5 200,00	4 160,00	1 040,00	620
070	Մարզական աստիճան պատ.	2	5 200,00	4 160,00	1 040,00	620
072	Բազմոց	1	6 300,00	5 040,00	1 260,00	620
073	Շվեդական պատաշար	2	5 800,00	4 640,00	1 160,00	620
075	Մարզական ներքնակ Մատ /2X1/	1	6 700,00	5 360,00	1 340,00	629
076	Պահարան պատաշար	1	22 000,00	17 600,00	4 400,00	620
077	Երկտեղանոց բազմոց	2	6 000,00	4 800,00	1 200,00	620
079	Գրասեղան 2 զզրոցով	1	6 800,00	5 440,00	1 360,00	620
080	Գրասեղան միակողմ զզրոցով	6	4 200,00	3 360,00	840,00	620
086	Պահարան երեք դռնանի	1	8 300,00	6 640,00	1 660,00	620
087	Պահարան երկու դռնանի	4	6 200,00	4 960,00	1 240,00	620
091	Բազկաթոռ	2	3 600,00	2 880,00	720,00	620
093	Հակահիդեհային վահանակ	2	52 000,00	41 600,00	10 400,00	629
095	Ուսուցչական սեղան	6	24 300,00	19 440,00	4 860,00	620
101	Գրքապահարան երկու մասով	6	0,10	0,08	0,02	620
1729	Ֆուտբոլի ձեռնարկ	12	350,00	280,00	70,00	702
1741	Կիմ Բակշի ՝Արցախի հոգևոր գանձերը՝	1	14 000,00	11 200,00	2 800,00	702
1742	Գեղարվեստական գրքեր	1	1 550 000,00	1 240 000,00	310 000,00	701
107	Գրքի պահարան	11	400,00	0,00	400,00	620
118	Պահարան	1	400,00	0,00	400,00	620
119	Երկաթյա կասսա	1	5 000,00	0,00	5 000,00	620
120	Սեղան աշակերտ. /վերագնահ. 1993թ. Ivեռ./	60	50,00	0,00	50,00	620
180	Աթոռ աշակերտ. /վերագնահ. 1993թ. Ivեռ./	200	0,10	0,00	0,10	620
380	Գրասեղան միակողմ զզրոցով	3	200,00	0,00	200,00	620
383	Ժամացույց	2	0,10	0,00	0,10	629
385	Քարտեզներ . /վերագնահ. 1993թ. Ivեռ./	40	0,10	0,00	0,10	629
425	Դաշնամուր . /վերագնահ. 1993թ. Ivեռ./	1	2 000,00	0,00	2 000,00	629
426	Հեռուստացույցի տակդիր	1	0,10	0,00	0,10	629
427	Աթոռ մետաղյա	15	0,10	0,00	0,10	629
442	Կախիչ	1	0,10	0,00	0,10	629
443	Վարագույր նվիրատվ.	50	0,10	0,00	0,10	629

493	Սառնարան նվիրատվ	1	0,10	0,00	0,10	629
494	Սեղան աշակերտական	65	800,00	0,00	800,00	620
559	Աթոռ աշակերտական	141	400,00	0,00	400,00	620
700	Չհրկիզվող պահարան նվիրատվ.	1	8 000,00	0,00	8 000,00	620
701	Պլակատներ	1	500,00	0,00	500,00	620
702	Գրադարակ	15	700,00	0,00	700,00	620
717	Կախիչներ	4	500,00	0,00	500,00	620
721	Դահլիճի նստարան 3 տեղանոց	30	1 000,00	0,00	1 000,00	620
751	Ճաշարանի սեղան	6	1 200,00	0,00	1 200,00	620
757	Էկրանի պայուսակ	1	0,10	0,00	0,10	620
758	Ձայնագրիչ CD-RW/DVD drive	1	0,10	0,00	0,10	620
759	Հաբ 8 մուտքանի	1	0,10	0,00	0,10	620
760	Մալուխ	1	0,10	0,00	0,10	620
761	Կոնեկտոր	12	0,10	0,00	0,10	620
773	Հատակի ծածկոց 50,4մ2	1	1 500,00	0,00	1 500,00	620
774	Անտենայի կոմպլեկտ	1	900,00	0,00	900,00	620
775	Գորգ	1	11 200,00	0,00	11 200,00	620
776	Քարտեզ	1	1 800,00	0,00	1 800,00	620
777	Արհեստական տոնածառ	1	0,10	0,00	0,10	620
778	Ձմեռ պապ	1	0,10	0,00	0,10	620
779	CD-ROM LiteOn	4	0,10	0,00	0,10	620
783	Շախմատ նվիրատվ.	2	0,10	0,00	0,10	620
785	Ծաղկաման մեծ չափի	12	1 600,00	0,00	1 600,00	620
797	Ծաղկաման մեծ չափի	4	1 840,00	0,00	1 840,00	620
801	Թերմոս ջրի	1	900,00	0,00	900,00	620
802	Ծաղկաման մեծ չափի	10	1 600,00	0,00	1 600,00	620
812	Ծաղկաման կախովի	5	280,00	0,00	280,00	620
817	Թերմոս ջրի մեծ չափի	1	900,00	0,00	900,00	620
818	Աղբաման ցանցավոր	5	0,10	0,00	0,10	620
823	Համակարգչային սեղան	1	4 500,00	0,00	4 500,00	620
824	Օֆիսային սեղան	5	6 500,00	0,00	6 500,00	620
829	Պահարան	1	12 000,00	0,00	12 000,00	620
830	Աթոռ	9	1 100,00	0,00	1 100,00	620
839	Լրագրասեղան	1	5 000,00	0,00	5 000,00	620
840	Հեռուստացույցի տակդիր	1	5 000,00	0,00	5 000,00	620
841	Գորգ	1	36 000,00	0,00	36 000,00	623
842	Աշակերտական սեղան	15	2 200,00	0,00	2 200,00	620
857	Աթոռ աշակերտական	30	350,00	0,00	350,00	620

887	Ուսուցչի սեղան	1	2 400,00	0,00	2 400,00	620
888	Ուսուցչի աթոռ	1	400,00	0,00	400,00	620
889	Գրատախտակ	2	1 500,00	0,00	1 500,00	620
891	Ուսուցչի սեղան	7	4 100,00	0,00	4 100,00	620
898	Գրապահարան	7	4 100,00	0,00	4 100,00	620
905	Գրատախտակ	8	2 000,00	0,00	2 000,00	620
913	Սեղան-աթոռ աշակերտական	50	3 500,00	0,00	3 500,00	620
963	Գորգ 3x4	1	129 000,00	0,00	129 000,00	623
964	Գորգ 2x3	1	32 000,00	0,00	32 000,00	623
965	Օֆիսային պահարան	8	10 000,00	0,00	10 000,00	620
973	Պահարան	5	1 500,00	0,00	1 500,00	620
978	Կախիչ	2	2 900,00	0,00	2 900,00	620
980	Շաղափ	1	8 200,00	0,00	8 200,00	629
981	Մուրճ	1	1 000,00	0,00	1 000,00	629
982	Երկկողմանի աստիճան	1	4 200,00	0,00	4 200,00	629
983	Բանալի N2	2	1 600,00	0,00	1 600,00	629
985	Աշակերտական սեղան	31	2 400,00	0,00	2 400,00	620
1016	Աշակերտական աթոռ անհատական	62	1 100,00	0,00	1 100,00	620
1078	Խաղային կլոր սեղան	4	3 200,00	0,00	3 200,00	620
1082	Ուսուցչի սեղան	4	5 400,00	0,00	5 400,00	620
1086	Ուսուցչի աթոռ	4	1 600,00	0,00	1 600,00	620
1090	Գրատախտակ	2	2 600,00	0,00	2 600,00	620
1092	Վոլեյբոլի ցանց	1	0,10	0,00	0,10	629
1093	Պարան	2	0,10	0,00	0,10	629
1095	Կշեռք	1	1 000,00	0,00	1 000,00	629
1096	Շախմատ	1	0,10	0,00	0,10	629
1097	Պահարան	4	16 000,00	0,00	16 000,00	620
1101	Ուսուցչի սեղան	2	1 100,00	0,00	1 100,00	620
1103	Ուսուցչի աթոռ	2	4 200,00	0,00	4 200,00	620
1105	Մանկական սպորտային ժիլետ	11	0,10	0,00	0,10	629
1116	Կոն	10	50,00	0,00	50,00	629
1126	Զագար	8	25,00	0,00	25,00	629
1134	Օղակ	4	200,00	0,00	200,00	629
1138	Քանոն	3	500,00	0,00	500,00	629
1141	Էլեկտրական ջեռուցիչ	1	0,10	0,00	0,10	629
1142	Ափսե	67	100,00	0,00	100,00	629
1209	Գդալ	72	50,00	0,00	50,00	629
1281	Պատառաքաղ	80	50,00	0,00	50,00	629

1361	Բաժակ	85	50,00	0,00	50,00	629
1446	Մաղ պլաստմաս.	2	0,10	0,00	0,10	629
1448	Դանակ	4	0,10	0,00	0,10	629
1452	Դանակ մեծ չափի	1	0,10	0,00	0,10	629
1453	Պլաստմասյա ջրի տարա	2	450,00	0,00	450,00	629
1455	Հեռախոս Panasonic	1	0,10	0,00	0,10	629
1456	Շախմատի աշակերտական գույք	18	7 500,00	0,00	7 500,00	629
1474	Աշակերտական սեղան	25	1 000,00	0,00	1 000,00	629
1499	Աթոռ աշակերտական	45	750,00	0,00	750,00	629
1544	Գրատախտակ	6	2 350,00	0,00	2 350,00	629
1550	Ծաղկաման քառակուսի մեծ չափի	8	1 750,00	0,00	1 750,00	629
1558	Կրակմարիչ	8	16 700,00	0,00	16 700,00	629
1567	Աշակերտական սեղան	50	10 200,00	0,00	10 200,00	629
1617	Աշակերտական աթոռ	100	5 600,00	0,00	5 600,00	629
1717	Ուսուցչական աթոռ	6	14 900,00	0,00	14 900,00	629
1723	Տոնածառի լույս	2	0,10	0,00	0,10	629
1725	Ճաշարանի սեղան(նվիրատվություն)	2	13 500,00	0,00	13 500,00	629
1727	Աղբաման	2	2 850,00	0,00	2 850,00	629
			114 028 960,30	12 569 206,63	101 459 753,67	

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Ուսումնական պրոցեսը կազմակերպելու համար դասասենյակների բավարար քանակ ✓ Համակարգչային սենյակի առկայություն ✓ Արմաթ լաբորատորիայի առկայություն ✓ Մարզադահլիճի առկայություն ✓ Խոհանոցի առկայություն ✓ Դասագրքերով հագեցած գրադարանի առկայություն ✓ Բուժկետի առկայություն ✓ Նիստերի դահլիճի առկայություն	➢ Դասասենյակները ունեն վերանորոգման և նոր գույքով համալրելու կարիք ➢ Համակարգչային սենյակը և Արմաթ լաբորատորիան տեղակայված են նույն սենյակում ➢ Մարզադահլիճը վերանորոգման և գույքով համալրելու կարիք ունի ➢ Գրադարանում գեղարվեստական գրականության բացակայություն ➢ Ընթերցասրահի բացակայություն ➢ Բուժկետի ոչ բավարար կահավորում ➢ Թեքահարթակների բացակայություն
Հնարավորություններ	Ռիսկեր
✓ Բացօթյա մարզահրապարակ ունենալու համար առկա տարածք դպրոցի բակում ✓ Տարածք համակարգչային սենյակը տեղափոխելու համար ✓ Տարածք ՆԶՊ կաբինետի համար	Համապատասխան սենյակների, մարզադահլիճի ու կաբինետների վերանորոգման և կահավորման համար ոչ բավարար ֆինանսական միջոցներ

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

- Դպրոցը գործում է օրինակելի Կանոնադրության հիման վրա, հաստատվել է 2019 թվականի մայիսի 10-ին ՀՀ Շիրակի մարզպետի թիվ 181-Ա որոշմամբ:
- Համաձայն ՀՀ Կրթության և Գիտության նախարարի N 277- Ա/Ք,05.04.2011 հրամանի դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝
  - ✓ տարրական ընդհանուր I աստիճան՝ լիցենզիա 0581/ 250 տեղ
  - ✓ հիմնական ընդհանուր II աստիճան – 0570/270 տեղ
  - ✓ միջնակարգ ընդհանուր III աստիճան – 0470/ 150 տեղ

2023-2024 ուստարում դպրոցում կազմավորվել է 19 դասարան սովորում են 434 աշակերտ, այդ թվում՝

տարրական դպրոց- 157աշակերտ /7դասարան/

միջին դպրոց- 212 աշակերտ /8 դասարան/

ավագ դպրոց-85 աշակերտ /4 դասարան/

Դպրոցում այս պահին սովորում է Արցախից տեղահանված 6 աշակերտ:

- Դպրոցում գործածվող ուսումնական պլանը կազմված է օրինակելի ուսպլանի հիման վրա:
- Ուսումնադաստիարակչական տարեկան պլանը և ներդպրոցական վերահսկողության պլանը դպրոցի կառավարման կարևորագույն փաստաթղթերից են և ապահովում են ճիշտ և համակարգված աշխատանքի կազմակերպումը: Կարևորվում է պարբերաբար կազմակերպել հանդիպում-քննարկումներ, սեմինարներ վարչական աշխատողների համար, իրազեկել փաստաթղթերի կարևորության և կազմման հմտություններին ու համապատասխան ձևաչափին:
- Ներքին և արտաքին գնահատման արդյունքները հնարավորություն են տալիս ամեն տարվա ավարտին ամփոփել կատարված աշխատանքները և արձանագրել հաջողություններն ու ձախողումները:
- Տնօրենի տեղակալը, կրթական աջակցությունների գծով համակարգողը, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը, մեթոդական միավորումների նախագահները, հոգեբանը, զինղեկը, լաբորանտը,

գրադարանավարը, ուսուցչի օգնականները յուրաքանչյուր կիսամյակի ավարտին կազմում և հաստատման են ներկայացնում կատարած աշխատանքների հաշվետվությունները։

Նախատեսվում է՝ առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 8 սեպտեմբերի 2020 թվականի N 28-Ն հրամանով, անցնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության։

Կարևորվում է նաև դպրոցում ներքին գնահատման առկայությունը, որը մշտադիտարկման հնարավորություն է տալիս, ակնառու դարձնում յուրաքանչուր տարում արձանագրված ձեռքբերումներն ու բացթողումները։ Ներքին գնահատումը պետք է ուղղորդել մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը։

Դպրոցի զարգացման ծրագրից բխելու է յուրաքանչյուր ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական, ներդպրոցական վերահսկողության պլանները, վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն։ Իսկ ամենամյա կատարողական հաշվետվությունները հնարավորություն են տալիս անընդհատ վերլուծել, գնահատել կատարված աշխատանքը և պլանավորել հետագա անելիքները։

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Օրինակելի ուսումնական պլանի հիմանվրա կազմված ուսումնական պլան Առարկայական չափորոշիչներին համապատասխան կազմված թեմատիկ պլաններ	
Հնարավորություններ	Ռիսկեր
Դպրոցի փաստաթղթաշրջանառության վերաբերյալ սեմինարներ Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության հնարավորություն	Վարչական աշխատակիցների էլեկտրոնային փաստաթղթեր մշակելու և ստեղծելու հմտությանբացակայություն

Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը

Ըստ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 77-րդ կետի՝ դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ։ Դպրոցում ներկա պահին գործում են բոլոր խորհուրդները, բացի հոգաբարձուների խորհրդից։ Նախատեսվում է բարձրացնել խորհրդակցական մարմինների դերն ու ներգրավվածությունը դպրոցի կառավարման գործում, միջոցներ ձեռնարկել աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և ձևական գործընթացները դադարեցնելու համար։ Բոլոր խորհրդակցական մարմինների համար կազմել կանոնադրություն՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը։
Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները։
Կառավարման խորհրդի անդամների օգնությամբ վեր հանել դպրոցում առկա խնդիրները և լուծման տարբերակներ մշակել՝ ներգրավելով համապատասխան մասնագետների, բարերարների կամ դիմելով դրամաշնորհային և ֆոնդհայթայթման ծրագրերի։ Օգտագործելով վերջիններիս ներուժը՝ ակտիվացնել սովորողների մասնակցությունը արտադասարանային և արտադպրոցական միջոցառումներին, տարբեր ոլորտների բացահայտմանը, տարբեր դասընթաների կազմակերպմանը, որոնք ապահովելու են կրթական միջավայրի զարգացումն ու բարելավումը։ Մշակել վերահսկողության մեխանիզմներ, քննարկել կառավարման խորհրդի նիստում և հավանության արժանանալու կամ անհրաժեշտության դեպքում լրամշակելուց հետո ներկայացնել կառավարման խորհրդի հաստատման։ Խորհրդի հետ համաձայնեցված ստեղծել հաշվետվությունների ձևերը և կազմել գործողությունների ժամանակացույց՝ վերահսկողությունն ավելի արդյունավետ կազմակերպելու համար։ Տարեկան առնվազն երկու անգամ՝ ամեն կիսամյակի ավարտին, խորհրդին ներկայացնել կատարված աշխատանքների հաշվետվությունը և քննարկել հաջորդ կիսամյակի համար նախատեսված անելիքները։

Նպատակ – Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի հետ համագործակցության դերի բարձրացում։

Խնդիր – Ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքների ուղղությունները։

Ռիսկեր – Ոչ մասնակցային մոտեցումը դպրոցի կառավարման գործում

խնդրահարույց իրավիճակներում: Դպրոցի ընդհանուր գործունեության թույլ վերահսկողություն: Դպրոցի կառավարմանը մասնակցող մարմինների գործունեության հնարավոր բացասական ազդեցություններ:

Ակնկալվող արդյունքներ – Տնօրենի և կառավարման խորհրդի սերտ համագործակցություն:

Ռիսկերը մեղմող գործողություններ – Իրականացնել կարգին համապատասխան դպրոցավարություն:

Նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված գործողություններ և միջոցառումներ	պատասխանատու	ժամանակացույց	ռեսուրսներ	ֆինանսական միջոցներ
1. Մասնակցել խորհրդի նիստերին խորհրդական ձայնի իրավունքով: 2. Խորհրդի քննարկմանը ներկայացնել դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքները, դրանում առանձին տողով ներկայացնել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, երկարօրյա դասընթացների կազմակերպումը: 3. Խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, ներքին գնահատման աշխատանքներին: 4. Խորհրդի հավանությանը ներկայացնել դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, այդ թվում՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների կազմը: 5. Ստեղծել միասնական առցանց հարթակ:	հաստատության տնօրեն	ծրագրի իրականացման ընթացքում	կառավարման հմտություններ	ֆինանսական միջոցների պահանջում

Ծնողական խորհրդի ներգրավվածությունն ապահովել դպրոցում իրականացվող կազմակերպչական հարցերին, ինչպես նաև բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ապահովելու գործում: Շատ կարևոր է ապահովել ծնող-դպրոց ամուր կապը, քանի որ սովորողի դաստիարակության կարևորագույն օղակներն են հանդիսանում: Փոխհամաձայնեցված աշխատանքը կապահովի բարձր արդյունավետություն:

Դպրոցն ունի հինգ առարկայական մասնախմբեր՝

- Տարրական կրթության- 7անդամ
- Հումանիտար- 6 անդամ
- Օտար լեզուներ- 4 անդամ
- ԲՏՃՄ- 9 անդամ
- Արհեստ և արվեստ- 6 անդամ

Անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել մեթոդական միավորումների բնականոն ու պարբերական աշխատանքին: Հետևողական ու կազմակերպված գործընթացը ապահովելու է դպրոցի ուսումնական մասի արդյունավետության բարձրացումը: Կարևոր է հավասարապես ապահովել բոլոր մանկավարժների մաքսիմալ տեղեկացվածություն փոփոխվող իրավական ակտերին, ՀՊՉ-ներին և այլ կարևորագույն ոլորտային և առարկայական փոփոխություններին, Նախագահների համար ապահովել վերապատրաստումներ, որոնք իրենց հերթին կկարողանան իրազեկ պահել իրենց մասնախմբի բոլոր ուսուցիչներին: Կարևորել փորձի փոխանակումն ու փոխադարձ դասալսումները, համակցված դասերն ու միջոցառումները, ինչպես նաև յուրաքանչյուր ուսուցչի թղթապանակում ապահովել առարկայական չափորոշչի առկայությունը, որի հիման վրա կկազմվեն առարկայական թեմատիկ տարեկան պլանները:

Աշակերտական խորհրդի հետ պարբերաբար անցկացնել հանդիպումներ և ապահովել վերահսկողություն՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունները, օժանդակել.

- ✓ Սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրականացմանը,
- ✓ նախաձեռնությունների ապահովմանը
- ✓ ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը,
- ✓ կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն

Ինչպես նաև ձևավորել ազգային և համամարդկային արժեքներ . . .

Աշակերտական համակազմ

Աշակերտական համակազմը ծնողների վստահության ցուցանիշն է։

Վերջին հինգ տարիների ընթացքում սովորողների թիվն աճել է /տես դիագրամը/ ։ Դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելիս սովորողի խնդիրները մատնանշելու փոխարեն առանձնացվում և վեր են հանվում նրա կարողություններն ու ներուժը։ Դպրոցում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող հինգ աշակերտ /խոսքի և լեզվի ֆունկցիաների թեթև և միջին խանգարումներով, ինտելեկտի ֆունկցիայի /մտավոր/ միջին խանգարումով, ինտելեկտի ֆունկցիայի /մտավոր/ ծանր խանգարումով, շարժունակության միջին խանգարումով/։ Ուսուցիչ-ծնող աջակցության ծառայություն ցույց տվող մասնագետ փոխհարաբերության արդյունքում ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսուցումը կազմակերպվում է նպատակային, մատչելի խելամիտ հարմարեցումներով, ինչպես ռեսուրս սենյակում, այնպես էլ դասարաններում։ Դպրոցն համագործակցում է ՏՄԱԿ-ի հետ, հատուկ մանկավարժը դպրոցում իրականացնում է աջակցության ծառայություն։ Տարիների հետևողական և ուշադիր աշխատանքից հետո մանկավարժահոգեբանական կազմը, ՏՄԱԿ-ի հետ համագործակցելով, էական արդյունքներ է գրանցել, աշակերտներից մեկն անգամ, հաղթահարելով ընդունման պահին առկա խնդիրները, սեպտեմբերից, ծնողի դիմումի համաձայն, դուրս է եկել ԿԱՊԿ ունեցող աշակերտների ցանկից և շարունակում է կրթությունը առանց անհատական ուսուցման պլանի։

Աշակերտների առողջության պատշաճ պահպանումը ապահովելու ուղղությամբ նախատեսվում է՝

1. Համագործակցել համայնքային բժշկական հաստատությունների հետ՝ մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով։
2. ԿԱՊԿ ունեցող սովորողների մարմնակրթության և ֆիզիկական դաստիարակության խնդիրները մշտապես պահել ուշադրության կենտրոնում։
3. Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված սովորողներին, կտրուկ վարքային փոփոխության ենթարկված երեխաներին մշտապես պահել ուշադրության կենտրոնում, տրամադրել հոգեբանական աջակցություն բուլինգի ենթարկված երեխաներին։
4. Ապահովել <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի պահանջը՝ պարտադիր պրոֆիլակտիկ զննության անցկացման մասին։

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
✓ Սովորողների նպաստավոր գործողություններ իրենց կրթական սոցիալականացման իրավունքների պաշտպանության առողջության պահպանման արդիականացմանը ✓ Մասնակցային և բազմակարծության գործընթաց կառավարման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, հանրային քննարկման որոշումների կայացման, ռեսուրսների բաշխման, ուսման և դաստիարակման որակի համար ✓ Դպրոցում և հասարակության մեջ, համայնքի, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցող ուսուցիչների, սովորողների և նրանց ծնողների արդյունավետ փոխհարաբերությունների կարողությունների հզորացմանը ✓ Իրական հնարավորություն է ստեղծում սովորողին, մանկավարժին քննարկելու և բանավիճելու վիճահարույց հարցերի շուրջ ✓ Սովորողների մոտ ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության ձևավորում, ամրապնդում	• Առանձին մանկավարժների և ծնողների անհանդուրժողականությունը բազմակարծության և մասնակցային գործընթացներում որպես ժողովրդավարության գործիք • Քաղաքացիական հասարակության դերակատարության նկատմամբ ծնողների ոչ լիարժեք դիրքորոշումը



Աշակերտական համակազմը թվային տվյալներով վերջին հինգ տարիների ընթացքում:



Գերազանցիկներ, անբավարար գնահատվածներ

- 2022-2023 ուսումնական տարում 429 աշակերտից միայն երեքն են հատել 120 ժամ բացակայության շեմը և հանձնել են լրացուցիչ քննություններ հայոց լեզու և

մաթեմատիկա առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ ուսումնական պլանով նախատեսված մյուս առարկաներից և ստուգարք ֆիզկուլտուրա առարկայից:

 Դպրոցում անցկացվել են ներդպրոցական առարկայական օլիմպիադաներ, լավագույն արդյունք ցուցաբերած մասնակիցները ընդգրկվել են տարածքային փուլին: 2022-2023 ուսումնական տարում աշակերտներից միայն 2-ին է հաջողվել հաղթահարել տարածքային փուլի անցողիկ շեմը և մասնակցել մարզային փուլին Նախնական զինվորական պատրաստություն առարկայից:

 2019 թվականի դեկտեմբերի 2-ից դպրոցում գործում է Արմաթ ինժեներական լաբորատորիա, որին աշակերտները մասնակցում են մեծ ոգևորությամբ: 3 տարիների ընթաքում մասնակցել են բազում մրցույթների՝ «Արմռոբոտիքս», «Ճարտարագիտական մոդելավորում», «Digitec Expo 2022», «Digi Code» պատանեկան ծրագրավորման մրցույթին և գրանցել հաջողություններ: Ներկա պահին խմբակ հաճախում է 28 աշակերտ: Մեծ թիվ են կազմում նաև Թումո հաճախող աշակերտները:

 Աշակերտները պարբերաբար մասնակցում են «Մեղու», «Ռուսական արջուկ», «Կենգուրու» մրցույթների, ասմունքի, երգի-պարի մրցույթ-փառատոնների:

 Շրջանավարտների մեծ մասը շարունակում է ուսումը միջին մասնագիտական և ՀՀ լավագույն բարձրագույն ուսումնական հաստատություններում:



	2020-2021	2021-2022	2022-2023
Շրջանավարտ	24	26	26
Գյումրու բուհեր ընդունվել են	13	12	8
Երևանի բուհեր ընդունվել են	4	1	7

Հաստիքացուցակ

№	Հաստիքների անվանումը	հաստիքային միավոր /դրույք/
1	Տնօրեն	1
2	Վարչատնտեսական մասի համակարգող	1
3	Տնօրենի տեղակալ	1
4	Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով համակարգող	1
5	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	1
6	Հաշվապահ	1
7	Ընթացիկ վերանորոգման և սպասարկման մասնագետ	1
8	Ջինղեկ	1
9	Քաղպաշտպանություն	0.35
10	Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ	1
11	Գործավար	1
12	Լաբորանտ	1
13	Ուսուցչի օգնական	3
14	Հոգեբան	1
15	Գրադարանավար	1
16	Հավաքարար	3
17	Ցերեկային պահակ	2
18	Գիշերային պահակ	2
19	Հնոցապան	0.5

Վարչական աշխատող – 4

Դասավանդող ուսուցիչ – 30

Մանկավարժական հաստիք – 9

Ուսումնաօժանդակ – 13

Շաբաթական ծանրաբեռնվածությունը

- Կես դրույք ծանրաբեռնվածությամբ աշխատում է 1 ուսուցիչ, որը համատեղությամբ աշխատում են նաև այլ դպրոցում
- Կեսից մինչև 1 դրույք ծանրաբեռնվածությամբ աշխատում է 15 ուսուցիչ
- 1 դրույք ծանրաբեռնվածությամբ աշխատում է 2 ուսուցիչ
- Դրույքից ավել ծանրաբեռնվածությամբ՝ 11 ուսուցիչ



- Աշխատանքային փորձը



- Տարիքային համամասնությունը



Աշխատակազմ

Դպրոցում դասավանդում են՝

- կամավոր ատեստավորում անցած 2 ուսուցիչ /70%/,1 ուսուցիչ/80%/,1 ուսուցիչ /62%/
- տարակարգ ունեցող 2 ուսուցիչ
- դասագրքերի գնահատման հանձնախմբում որպես փորձագետ ընդգրկված ուսուցիչ
- տարբեր կրթական ծրագրերի, գիտաժողովների, վեբինարների, առցանց համաժողովների մասնակցող ուսուցիչներ:
- մենթոր ուսուցիչ
- Դպրոցի վարկանիշի բարձրացման թիվ մեկ նախապայմանը հմուտ ու գիտակ ուսուցիչների աշխատանքն է, ուստի կարևոր է պարբերաբար ապահովել ուսուցիչների մասնագիտական կատարելագործումը, խրախուսել ուսուցիչներին աշխատել ու բարձրացնել սեփական գիտելիքների ու կարողությունների մակարդակը, ավելացնել կամավոր ատեստավորում անցած, տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը:
- Կարևոր է զարգացնել ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման կարողությունները, ուսուցիչների մեջ ձևավորել ուսուցանող գնահատման իրականացման բավարար հմտություններ, զարգացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունները:

Աշխատակազմի ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Դպրոցը համալրված է փորձառու ուսուցիչներով 2. Բոլոր ուսուցիչներն ունեն մասնագիտական բարձրագույն կրթություն 3. Դպրոցում դասավանդում են կամավոր ատեստա-վորում անցած, տարակարգ ունեցող ուսուցիչներ 4. Ուսուցիչները ակտիվորեն մասնակցում են ԿՁՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող սեմինար քննարկումներին և Teams հարթակում կազմակերպվող խորհրդատվություններին	1. Երիտասարդ ուսուցիչները քիչ են: 2. Կամավոր ատեստավորված և տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը քիչ է: 3. Մոտիվացիայի մակարդակը ցածր է: 4.Լաբորատորիան ունի ոչ բավարար հագեցվածություն և տարածքը սահմանափակ է: 5.Փորձառու մանկավարժների առկայության պարագայում այդուհանդերձ սովորողները օգտվում են կրկնուսույցի ծառայությունից: 6.Ուսուցիչները լիարժեք չեն տիրապետում նոր ՀՊՉ-ին և դրանից բխող ծրագրային ու մեթոդական փոփոխություններին: 7.Դասապրոցեսի ընթացքում ՏՀՏ միջոցների կիրառումը սահմանափակ է:
Հնարավորություններ	**Ռիսկեր**
Ակտիվ ուսուցիչների գրանցած հաջողությունները որպես մոտիվացիա	Ուսուցիչների պասիվություն

ՆՊԱՏԱԿ

Խթանել մանկավարժական համակազմի որակավորման բարձրացման հնարավորությունները, ապահովել համագործակցային բազմակարծիք մասնակցային և ներառական միջավայր:

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ներդնել ուսուցիչների խրախուսման համակարգ
2. Կամավոր ատեստավորմանը մասնակցելու և տարակարգ ստանալու համար դիմելու մոտիվացում
3. Ուսումնական պրոցեսին ՏՀՏ միջոցների կիրառման ընդլայնում
4. Հետևողական աշխատանք ծավալել՝ դպրոցում բռնությունը բացառելու համար և հալածանքը միջանձնային հարաբերություններում
5.Տրամադրել մեթոդական աջակցություն սկսնակ ուսուցիչներին

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

✓ Հաջողություններ և ձեռքբերումներ արձանագրած ուսուցիչներին պարգևատրել (խրախուսական հուշանվերներ, պատվոգրեր):

✓ Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ մանկավարժական համակազմի հետ կամավոր ատեստավորում անցած և տարակարգ ունեցող ուսուցիչների հետ:

✓ Կազմակերպել դասընթացներ ուսուցիչների համակարգչային հմտությունները բարելավելու ուղղությամբ:

✓ Ակտիվացնել դպրոցում շփումները հոգեբանական աջակցություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ, տրամադրել անհատական հոգեբանական աջակցություն թե՛ աշակերտներին, թե՛ ուսուցիչներին , թե՛ ծնողներին(հոգեբան): Առանձնահատուկ հոգեբանական աջակցություն ցուցաբերել Արցախից բռնի տեղահանած աշակերտներին և նրանց ծնողներին:

✓ Նպաստել դպրոցում մեթոդական միավորումների դերի բարձրացմանը, հաճախակի մասնակցությունը տարբեր հարթակներում կազմակերպվող վերապատրաստումներին (առկան հեռավար),համագործակցել այլ ուսումնական

հաստատությունների մեթոդական միավորումների հետ՝ փորձի փոխանակման նպատակով:

Մշտադիտարկման առանցքում պահել սկսնակ ուսուցիչներին:

Աշխատանք մանկավարժական համակազմի հետ

Դպրոցը մանկավարժի կերպարի ձևավորման գործում ունի առանցքային նշանակություն: Ուստի անհրաժեշտ է ձևավորել աշխատանքային այնպիսի միջավայր, որտեղ յուրաքանչյուր մանկավարժի անհատական ձեռքբերումը կարժևորվի և ուսուցչին կմղի մասնագիտական շարունակական աճի:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի նպատակն է՝

1.Մանկավարժական համակազմի համար արդի կրթական պահանջներն ապահովող միջավայրի ձևավորում

2.Մանկավարժներին մղել մասնագիտական որակները կատարելագործելու, հետազոտական աշխատանքներ իրականացնելու և հարուստ փորձը մանակավարժական համակազմի շրջանում տարածելու պատրաստակամության

3. Ապահովել ուսուցիչների ինքնազարգացման ուղղությամբ աշխատանքների շարունակականությունը (առարկայական, մեթոդական ՏՀՏ կիրառման ուղղությամբ)

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

1.համագործակցել ՏՀՏ կիրառման փորձառություն ունեցող դպրոցների հետ

2.ստեղծել միջավայր և հնարավորություններ լավագույն փորձի փոխանակման համար

3.վերապատրաստված մասնագետների կողմից սեմինարների, խորհրդատվական հանդիպումների կազմակերպում դպրոցի մանկավարժական աշխատողների մասնագիտական որակների համար

4.ապահովել փորձի փոխանակում՝պարբերաբար իրականացվող փոխադարձ դասալսումների միջոցով

5.պարբերաբար իրականացնել ուսուցիչների միջև համագործակցային մթնոլորտի կատարելագործմանը նպաստող գործողություններ

6.մանկավարժների համար դպրոցում ստեղծել տեղեկատվական մի համակարգ, որը հնարավորություն կտա բարելավել գիտելիքները հետևյալ ուղղություններով՝

ա/դպրոցի և կրթության նկատմամբ նոր պահանջներ

բ/հոգեբանություն և մանկավարժություն

գ/ժամանակակից մանկավարժական նվաճումներ

դ/առաջավոր մանկավարժական փորձ

Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վելուծությունը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը անհատի կրթական կարիքներին: Այն հնարավորություն է տալիս գնահատել առկա իրավիճակը, սահմանել նոր նպատակներ, գտնել նոր ուղիներ նպատակներին հասնելու համար, ապահովել ՀՊՉ-ով ասհմանված վերջնարդյունքները, անհրաժեշտության դեպքում վերացնել և շտկել թերությունները: Հանրակրթության պետական չափորոշչի փոփոխությունը ենթադրում է նախկին գիտելիքահեն կրթությունից անցում կարողունակահեն կրթության: Այս պարագայում ուսուցչի աշխատանքը դառնում է ավելի ընդգրկուն: Ուսուցիչը անընդհատ պետք է դասարան բերի սովորողներին հետաքրքրող նոր թեմաներ, գտնելու նոր լուծումներ և իրականացնելու նախագծային հետազոտական աշխատանքներ: Այն գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որ սովորողը ձեռք էր բերում իր ուսումնառության ընթացքում, նոր չափորոշչի ներդրմամբ կունենա կյանքում կիրառելու հմտություններ: Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ: Լինել կարողունակ նշանակում է, որ սովորողը որևէ բնագավառի մասին պետք է ունենա որոշակի գիտելիքներ, հմուտ լինի այդ բնագավառում գործունեություն ծավալելու, ունենանաև արժեքային որոշակի համակարգ և կարողանա արտահայտել իր դիրքորոշումն այդ բնագավառի մասին:

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հաստատության ներդպրոցական վերահսկողությունը ենթադրում է դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի վերլուծություն, որի նպատակն է ապահովել համակողմանի տեղեկատվություն դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի վիճակի մասին և առաջացող խնդիրները լուծելու համար կատարել ժամանակային անհրաժեշտ փոփոխություններ: 2023-2024 ուսումնական տարվա սեպտեմբեր ամսվա ընթացքում դպրոցում իրականացվել է մնացորդային գիտելիքների ստուգում 9-րդ դասարանում (հանրահաշիվ, երկրաչափություն), 10-րդ դասարանում (հայոց լեզու և հայ գրականություն) առարկաներից և ընթերցանության գնահատում 2-4-րդ դասարաններում: Արդյունքները քննարկվել են մեթոդական միավորումների սեպտեմբեր ամսվա նիստերի ընթացքում:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Բոլոր ուսուցիչներն ունեն առարկայական թեմատիկպլաններ, դասարան են մտնում օրվա դասի պլանով, կատարում են փոխադարձ դասալսումներ, քննարկումներ, վերլուծություններ: Օրվա դասի պլաններում սահմանված են դասի նպատակները, խնդիրները և վերջնարդյունքներին հասնելու ընթացքը և ուղիները: Ուսուցիչներն ակտիվորենկիրառում են փոխներգործուն, համագործակցային մեթոդներ, ստեղծագործական մոտեցումներ: Ապահովում են հետադարձ կապը գնահատման բնութագրիչների գործիքակազմը:	Կարողունակահեն կրթության կազմակերպման հմտություններիպակաս: Նախագծային ուսուցում կազմակերպելու դժվարություններ: Գնահատման օբյեկտիվության և բնութագրիչների կիրառման դժվարություններ:

Ուստի առաջնային նպատակ ենք համարում ապահովել Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կրթական տարբեր աստիճաններում սովորողների ուսումնառության ակընկալվող վերջնարդյունքները:

Մեր խնդիրն է՝

1) Ձևավորել ՀՊՉ պահանջներին համապատասխան կարողունակ քաղաքացիներ,

ովքեր կլինեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և սոցիումին ինտեգրված:
2)Կիրառել նոր գնահատման համակարգը, օգտագործել բնութագրիչները, պահպանելօբյեկտիվության:
3) Ամենօրյա աշխատանքում զարգացնել առանցքային ութ կարողունակությունները, ապահովել վերջնարդյունքները:

Գործողություն	Ժամկետներ	Պատաս-խանա-տուներ	Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, Նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ
1) Կազմակերպել սեմինար–քննարկումներ չափորոշչային պահանջները յուրացնելու, նոր գործիքակազմը կիրառելու նպատակով, ուսուցիչների հաջողված արդյունքները ի ցույց դնելբոլոր մանկավարժներին: 2) Կազմակերպել երկարօրյա ուսուցում ցածր առաջադիմությունունեցող և ԿԱՊԿ ունեցող սովորողների համար: 3) Դպրոցում պահպանել սոցիալական արդարություն, առաջնորդվել մարդու իրավունքների պաշտպանու-թյան, կրթության բարձր որակի հավասար հասանելիության և մատչելիության սկզբունքներով: 4) Դպրոցում զարգացնել նախագծային աշխատանքներ կատարելու, հետազոտական աշխատանքներ իրականացնելու կարողունակություններ: 5) Սովորողների և մանկավարժների մոտ զարգացնել ճկունություն	2023-2028թթ	տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ	ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀՄԿ,ՏՄԱԿ, ՀԿ-ներ, հիմհադրամներ Տարակարգի, կամավոր ատեստավորման, պարտադիր ատեստավորման նախատեսված գումարներ: Փորձառու ուսուցիչների փորձիփոխանակում, միասնական, համագործակցված աշխատանք բոլոր ոլորտներում:

Կրթական գործընթացում, առօրյա կյանքում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում օպերատիվ փոփոխություններ ի և արագ արձագանքման կարողունակություն ններ: 6) Տարեկան թեմատիկ և օրվա դասիպլանավորում կատարելիս մղել ուսուցիչներին առաջնորդվել Հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչով և ապահովել պահանջվող կանոնները: 7)Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը բարելավելու, գնահատում իրականացնելու և նոր նպատակներ պլանավորելու համար շարունակել կիրառել հետևյալ մեխանիզմները՝ ինտենսիվ դասալսումներ, տնօրենության կողմից ստուգիչ աշխատանքներ, չափորոշչային պահանջները բավարարող ինտեգրված, ցուցադրական, բաց դասեր, դասավանդման որակի գնահատում,նախագծային աշխատանք, ուսումնադաստիարակչ ականաշխատանքների			

հաշվետվությունների վրա կատարելվերլուծություններ, մշակել նոր ռազմավարություն, խթանելսահմանված պարտադիր խմբակներերի աշխատանքը «Առողջապրելակերպ», «Մասնագիտական կողմնորոշում» սովորողի կարիքներից ելնելով պլանավորել նորերը: 8)Գործընկեր դպրոցների հետ համագործակցելով կազմակերպելաշակերտական կոնֆերանսներ, նախագծային աշխատանքներ, փորձի փոխանակման տարբեր միջոցառումներ:			

Ռիսկեր

1. Ուսուցչի և դպրոցի նկատմամբ սխալ կարծրատիպերի ձևավորում:
2. Համավարակ, արտակարգ դրություն:
3. Ուսումնառության նկատմամբ հետաքրքրության նվազում:
4. Բուլինգն ու բռնությունը դպրոցում:

Ռիսկերը մեղմող գործողություններ

1) Կրթության որակի և կրթական միջավայրի բարելավում, վերջնարդյունքների ապահովում:
2) Առցանց, հեռավար ուսուցում:
3) ՀՊՉ-ով նախատեսված գրոծողությունների հետևողական իրականացում, նոր գնահատման համակարգի ներդրում:
4) Բուլինգի շղթայի բացահայտում, անհատական աշխատանք սովորողների, ծնողների և ուսուցիչների հետ:
5) Հալածանքի, բռնության, օտարման դեպքերի բացահայտում, կանխարգելիչ թիմային աշխատանքի կազմակերպում:

Բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
Դպրոցում առկա է բազմակարծիք, համընդհանուր ներառական մասնակցային բարենպաստ կրթական միջավայր: Դպրոցը պահում է սովորողների և աշխատակիցների կարծիքն ազատ արտահայտելու իրավունքն ու ազատությունը, զարգացնում է քննադատական մտածողություն ձևավորելու կարողունակութուններ: Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ, կրթության հավասար իրավունքը, ինչպես նաև համընդհանուր ներառական կրթության քաղաքականությունը, որը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Սկսած 2019թ.-ից՝ դպրոցն իրականացնում է համընդհանուր ներառական կրթություն: ԿԱՊԿՈՒ աշակերտների համար ստեղծված են հնարավորություններ իրենց կարողունակությունները զարգացնելու համար: Մշտապես աշխատանք է կատարվումուսման որակը բարելավելու, աշակերտների գիտելիքը, հմտությունը, դիրքորոշումը և արժեքային բաղադրիչը զարգացնելու ուղղությամբ՝ առողջության պահպանման, անվտանգ կենսագործունեությունը,	• Կան որոշ աշակերտներ,որոնք դուրս են մնում ծնողների վերահսկողությունից, տարված են համակարգչայինխաղերով, բացակայում են անհարգի: • Գերազանց սովորող աղջիկների թիվը առավել է տղաների թվից: • Կաարտադասարանային ընթերցանության պակաս, երեխաները գրքի նկատմամբ հատաքրքրություն քիչ են ցուցաբերում: • Սովորողների հետաքրքրությունը բնագիտական առարկաների նկատմամբ սակավ է: • Քիչ թվով սովորողներ են մասնակցում առարկայական օլիմպիադային: Դպրոցում չկան բացառիկ կարողություններով աշակերտներ: • Դպրոցում կան աշակերտներ, որոնք դժվարությամբ են ինտեգրվում շրջապատում :

ռազմահայրենասիրական, բարոյական դաստիարակությունն ամրապնդելու համար: Դպրոցնուսումնասիրում է յուրաքանչյուր երեխայի վարքագիծը, սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա վարքագծի վրա՝ հենված ժողովրդավարական, ազգային արժեքների վրա: Դպրոցն օգտագործում է տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարներինչպես նաև անհատական մոտեցումներ, որպեսզի ապահովվի բոլոր երեխաների մասնակցայնությունը: Հաստատությունը հմտորեն տիրապետում է բուլինգի և բռնության դեպքերը բացահայտելու և կանխարգելու հմտություններին: Այստեղ հաշվի էառնվում յուրաքանչյուր երեխայի հույզերը, նախասիրությունները, տաղանդը: Արժեհամակարգային ուսումնադաստիարակչական հարթակում իրականացվում են հայրենասիրական, բնապահպանական, մեդիագրագիտության,մարդու իրավունքների և պարտականությունների, մասնագիտության կողմնորոշման տարբեր աշխատանքներ: Դպրոցն ակտիվ մասնակցում է տարածքային, մարզային հանրապետական օլիմպիադաներին, բայց հանրապետական օլիմպիադաներում հաղթողներ չենք ունեցել: Դպրոցն ակտիվ է նաև սպորտային միջոցառումներում և մարզում գրավել է պատվավոր տեղեր: Դպրոցում կազմակերպվում են դասարանական, արտադասարանական, դպրոցական,	

արտադպրոցական բազմաթիվ նպատակային միջոցառումներ, որոնք ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում ճանաչողական ակտիվության, գեղագիտական ճաշակի ու մշակութային զարգացվածությանը, հայրենասիրական դաստիարակությանը: Հաստատության գրեթե բոլոր սովորողները տիրապետում են ՏՀՏ գործիքներին, բոլորն ապահովված են դասագրքերով: Մեծ թվով սովորողներ հաճախում են Թումո, մեդիագրագիտությունը բարելավող այլ կենտրոններ և զարգացման կենտրոններ: Դպրոցում կան օժտված և շնորհալի սովորողներ, ովքեր մասնակցում են տարբեր նախագծերի և ունենգրանցած հաջողություններ: Դպրոցի առաքելությունն է դաստիարակել այնպիսի մարդիկ, որ յուրաքանչյուր սովորող լինի հասարակությանը պիտանի, ինքնուրույն կյանքին լիարժեք պատրաստված, արդյունավետ շարունակի կրթության հաջորդ աստիճանը և կարողանա անցնել արժանապատիվ գործունեության: Ակտիվ աշխատանք է տարվում ստեղծելսերունդ, որը իր մեջ կրում է մասնակցային մշակույթը և արժևորում յուրաքանչյուր անհատի դերը:	

Համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, շահառու կազմակերպությունների, կրթության կառավարման մարմինների հետ

- Աշակերտները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում համայնքի մշակութային կյանքին
- Պարբերաբար կազմակերպվում են այցելություններ ուսումնական տարբեր հաստատություններ առկա մասնագիտություններին ծանոթացնելու և սովորողների մասնագիտական կողմնորոշման համար:
- Պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվում նաև տարբեր կազմակերպույթյունների, պետական կառույցների աշխատակիցների հետ սովորողների համար ավելի լայն հնարավորություններ բացելու և մասնագիտական ոլորտներին ծանոթացնելու համար:
- Համագործակցության արդյունքում աշակերտները այցելել են Գյումրու գարեջրի գործարան, Անուշարան, Կենտրոնական բանկ, Տնտեսագիտական համալսարան, Շիրակի պետական համալսարան և այլն:
- Ակտիվորեն կազմակերպվում են նաև ճանաչողական այցեր տարբեր թանգարաններ, մշակութային մեծ արժեք ներկայացնող վայրեր՝ կարևորելով մշակութային և գեղագիտական դաստիարակությունը:
- Մշակութային և գեղագիտական դաստիարակության անբաժան մաս են կազմում նաև այցելությունները կինո և թատրոն:
- Դպրոցում դասավանդվում է Ձեռնարկատիրություն առարկան, որի շրջանակում դպրոցը համագործակցում է «Մեղվիկ» ՀԿ-ի, «Պատանեկան նվաճումներ» ՀԿ-ի հետ: Աշակերտներն իրենց արտադրանքն են ներկայացրել Երևանում անցկացված տոնավաճառներին: Ներկայացվել է կավե մուշուրբա, որը Գյումրու խորհրդանիշն է համարվում, իսկ մաքրամեի խմբակ հաճախող աշակերտները ներկայացրել են իրենց պատրաստած և գեղեցիկ փաթեթավորած զարդերը, որոնք ակտիվորեն վաճառվել են, իսկ վաճառքից ստացված հասույթով դպրոցի համար մարզական գույք է գնվել:
- «ԿԶՆԱԿ» հիմնադրամի և «Ալվան ծաղիկ սոցիալ-կրթական կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցելով դպրոցի 20 աշակերտ մասնակցել է «Տեխնազիում» պիլոտային ծրագրին Գյումրիում, որի շրջանակում իրականացվել են նախագծային աշխատանքներ և որպես վերջնարդյունք ստեղծվել են շաքարային դիաբետով հիվանդ երեխաների համար նախատեսված սեղանի խաղ, Գյումրու« Հաղթանակ» զբոսայգու եռաչափ մոդելը:

  Նախատեսվում է զարգացնել մինչ այժմ ձեռք բերված համագործակցությունները տարբեր կառույցների հետ, պարբերաբար հանդիպումներ ու այցեր կազմակերպել հոգեբանական, իրավաբանական, սոցիալական ու զարգացման կենտրոններ, համգործակցություն ձեռք բերել նաև հասարակական կազմակեպությունների ու բարեգործական կազմակերպությունների հետ:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցը համագործակցում է միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, ինչպես նաև այլ հաստատությունների և կազմակերպությունների հետ: Դպրոցը ակտիվ համագործակցում է թատրոնների, թանգարանների և այլ մշակութային կենտրոններիհետ: Համագործակցելու պատրաստակամություն ունեցող աշխատակիցներ Նախագծային աշխատանք իրականացնելու փորձ	Պասիվություն է ցուցաբերվում ավագ դասարանների աշակերտների կողմից: Հետաքրքրության բացակայություն
Հնարավորություններ	Ռիսկեր
Տարբեր ոլորտի հասարակական ու պետական կառույցների հետ համագործակցության ընդլայնում Նախասիրությունների շրջանակի բացահայտում	Աշակերտների ու ուսուցիչների պասիվություն Ավագ դասարանների աշակերտների ծանրաբեռնվածություն հավելյալ առարկայական պարապմունքներով

Համագործակցություն ծնողական համայնքի հետ

Նպաակ – Սովորողների կրթության գործում ծնողի դերի մեծացում, իրականացնելով դաստիարակչական աշխատանքներ, մշակել և ներդնել արդյունավետ մեխանիզմներ, ներմուծել կրթական արդի ծրագրեր:

Խնդիր – Ծնողներին ակտիվորեն ներգրավել դպրոցում ընթացող գործընթացների մեջ:

Բարձրացնել փոխվստահության մակարդակը:

Առավել արդյունավետ դարձնել ընտանիք - դպրոց համագործակցությունը:

Ռիսկեր – Ծնողների ընդհանուր պասիվություն ուսուցման և դաստիարակության հարցում:

Ծնողական պատասխանատվության ցածր մակարդակ:

Ռիսկերի մեղմում ծնողական ժողովների ժամանակ՝ ծնողների իրավունքների և պարտականությունների մասին իրազեկում:

Ակնկալվող արդյունքներ – Քննարկող, լուծումներ առաջարկող, նախաձեռնող ծնողական համայնք:

Հնարավորություններ – Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներ:

Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ

Նպատակ – Տեղական ինքնակառավարման մարմիններ – դպրոց կապի ամրապնդում:
Խնդիր – Դպրոցի հետ կապված բոլոր հացերում արդյունավետ դարձնել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը:
Ռիսկեր – Աշխատանքային պարտականությունների կատարման թերացումներ:
Ռիսկերի մեղմում – Կազմակերպել խորհրդատվություններ, անհատական հանդիպումներ:
Ակնկալվող արդյունքներ – Դպրոցի նկատմամբ սրտացավ վերաբերմունքի ձևավորում:
Հնարավորություններ - Փոխվստահության, համագործակցության պատրաստակամություն ի նպաստ դպրոցի գործունեության:

Ուսումնական սոցիալական միջավայր

- Դպրոցն ունի և կիրառում է Ներքին կարգապահական կանոններ, այդ թվում վարքականոններ:
- Կարևորելով միջանձնային հարաբերությունները՝ նախատեսվում է մեծ աշխատանք տանել թե՛ աշխատակազմի, թե՛ աշակերտների ու ծնողների հետ համագործակցային միջավայր ձևավորելու համար:
- Ժողովրդավարական կառավարումը դպրոցում անհրաժեշտ է բարձր մակարդակով կազմակերպել՝ կարևորելով աշակերտի կրթություն ստանալու իրավունքը:
- Բացառել բուլինգի դրսևորման դեպքերը դպրոցում թե՛ աշակերտների, թե՛ ուսուցիչների կողմից: Ձևավորել կայուն ու ներդաշնակ միջավայր:
- Ստեղծել համագործակցային հավասար պայմաններ բոլոր ուսուցիչների ու աշակերտների համար:
- Դպրոցում թե՛ աշխատակազմի և թե՛ աշակերտների համար պետք է առաջնայնություն տալ ու կարևորել համախմբված ու միասնական թիմային աշխատանքի գաղափարը: Թիմը հաջողակ աշխատանքի հիմքն է գործունեության յուրաքանչյուր ոլորտում: Դպրոցն իր ձեռքբերումներով պարտական է բարձրորակ մասնագետների և փորձառու ղեկավարի թիմային աշխատանքին, որի արդյունքում պիտի ձևավորվի դպրոցի միասնական ոգին, և անընդհատ կատարելագործվելու ձգտումը: Թիմի յուրաքանչուր անդամ ունի իր անհատական ներդրումը ընդհանուր աշխատանքում և պատասխանատվություն է կրում վերջնական արդյունքի համար: Ճիշտ թիմային աշխատանքը, դպրոցի առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը, փոխհամաձայնեցված ու կանոնակարգված աշխատանքը, թափանցիկ, բոլորի համար հասանելի ու հավասար աշխատանքային պայմանները, ճիշտ ու գրագետ մոտեցումը յուրաքանչյուր աշակերտին հանգեցնելու է դպրոցի ընդհանուր մթնոլորտի փոփոխությանը, վարկանիշի բարձրացմանը: Ծայրաստիճան կարևոր է արտոնյալ խավի բացառումը թե՛ աշխատակազմի, թե՛ աշակերտների շրջանում: Յուրաքանչյուրը

պիտի գիտակցի ու ընդունի իր առաքելությունը այս դպրոցում,պահանջատեր լինի իր իրավունքների և բարեխիղճ իր պարտականությունների հարցում:

Տեխնոլոգիաներ և նորարություններ

- Տեխնոլոգիաների և նորարարությունների կիրառումը դպրոցում բավարար է, սակայն, հաշվի առնելով օր օրի զարգացող մեր իրականությունը, առաջնային նպատակներից է մաքսիմալ ապահովել ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսին ուսուցիչների կողմից՝ ավելի արդյունավետ ու հետաքրքիր, նորարարական լուծումներով դասապրոցես ապահովելու համար:
- Ապահովել ուսուցիչների ակտիվ համագործակցությունը օպերատորի և ինֆորմատիկայի ուսուցչի հետ ավելի ակտիվ ու ժամանակակից մոտեցումներով հագեցած դասապրոցես ունենալու համար:
- Արմաթ լաբորատորիայի առկայությունը աշակերտներին ոգևորելու, ժամանակակից աշխարհի հետ համընթաց քայլելու հնարավորություն է տալիս: Զարգացնելով և կարևորելով աշակերտների ընդգրկվածությունը գործող խմբակին՝ անհրաժեշտ է ավելի գրագետ ու նպատակային օգտագործել առկա ռեսուրսները, լաբորատորիայի առկայությունը դիտել ոչ թե ժամանցի տարբերակ, այլ հենքային գիտելիք ապահովել, որը հնարավորություն կտա ապագայում ավելի խոր մասնագիտական կարողությունների զարգացման:
- Աշակերտների համակողմանի զարգացումն ապահովելու համար նպատակահարմար է ձևավորել արտադասարանական խմբակներ՝ լեզուների ուսուցման,ծրագրավորման և այլն՝ կախվածաշակերտների նախասիրություններից:

Դասապրոցեսի արդյունավետության բարձրացման համար կարևոր է նաև դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացումը՝ մարզական գույք, լաբորատոր ժամանակակից գույք, էլեկտրոնային գրատախտակ, մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ կահավորված գրադարան և այլն:

Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում

Ուսումնական գործընթացին զուգահեռ դպրոցն իրականացնում է մի շատ կարևոր գործառույթ ևս՝ դաստիարակությունը: Այս կարևորագույն գործընթացում երկուստեք կանոր են թե՛ ծնողի, թե՛ ուսուցչի դերը: Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

1.Սովորողի մեջ ձևավորել հայրենասիրություն, մարդասիրություն, հարգալից վերաբերմունք հայոց լեզվի, մշակույթի և ազգային արժեքների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը, պահպանողն ու փոխանցողը:

2.Օգնել սովորողին /հատկապես դեռահասին/ առանց սթրեսների հարմավել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին:

3.Յուրաքանչյուր երեխայի դաստիարակությանը վերաբերող խնդիրները հաղթահարելու ուղղությամբ կարևոր է ծնողների և ուսուցիչների սերտ համագործակցությունը և համատեղ պատասխանատվությունը դաստիարակչական համակարգի կատարելագործմանն ուղղված աշխատանքների իրականացման գործում:

Դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

Առաջին հերթին աշակերտների մեջ անհրաժեշտ է սերմանել ու զարգացնել կայուն արժեհամակարգ: Ձևավորել ամենակարևորը.

- սեփական կարծիք ունենալու ու արտահայտելու կարողություն
- սեփական արարքների համար պատասխանատվություն կրելու կարողություն
- պատրաստակամություն աջակցելու, օգնելու բոլորին
- սեփականության զգացում դեպի դպրոցը, ուսուցիչը, կրթությունը,
- սեփական մշակույթի ու հայրենիքի արժևորում
- Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայրի արժևորում
- Հայաստանի Հանրապետության արդի հիմնախնդիրները և մարտահրավերները տեղական, տարածաշրջանային և գլոբալ համատեքստում վերլուծելու, դրանց որպես իրազեկ, պատասխանատու և հայրենասեր քաղաքացի արձագանքելու կարողություն:
- իր՝ որպես քաղաքացու դերը հասարակության մեջ սոցիալական արդարության և ժողովրդավարական մշակույթի ձևավորման գործում կարևորելու, հարգանք ցանկացած մարդու արժանապատվության, հիմնարար իրավունքների և ազատությունների հանդեպ ցուցաբերելու կարողություն:
- հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթում ներկայացնելու հմտություն:

Մասնագիտական կողմնորոշման դասընթացների կազմակերպում

Ուսումնական պրոցեսը ինքնին աշակերտներին բացահայտելու, նրանց կարողությունները գնահատելու ու հզորացնելու պրոցես է: Սակայն աշակերտների կարողությունների, հետաքրքրությունների ու նախասիրությունների ճիշտ բացահայտումը առավել կարևոր է ավագ դասարաններում: Սա անցումային ամենաբարդ շրջանն է թե՛ աշակերտների և թե՛ ծնողների համար, որոնք չեն կարողանում կողմնորոշվել, թե ինչ մասնագիտություն ընտրեն: Անհրաժեշտ է հանգամանորեն ծանոթացնել տարբեր մասնագիտությունների հետ՝ անդրադարձ կատարելովմասնագիտությունների առավելություններին ու թերություններին, դժվարություններին ու հնարավորություններին: Հնարավորություն ստեղծել յուրաքանչյուր աշակերտի համար ուսումնասիրելու և գնահատելու տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարողունակությունները և պատճառաբանված ընտրություն կատարելու: Կարևորելով աշխատաշուկայի պահանջները՝ ուղղորդել ավելի պահանջված ու արդի մասնագիտությունների ընտրության: Կազմակերպել հանդիպումներ տարբեր ոլորտների մասնագետների հետ, հնարավորություն տալ աշակերտներին իրենց հետաքրքրող բոլոր հարցերին ստանալ սպառիչ պատասխաններ, այցելել տարբեր քոլեջներ, բուհեր, որ ավելի վստահ կարողանան կատարել իրենց ընտրությունը: Այս ամենին զուգընթաց աշակերտները կկարողանան ձեռք բերել նաև այլ կարևորագույն հմտություններ, որոնք անհրաժեշտ են լինելու կյանքի ցանկացած փուլում, ցանկացած բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Կարևոր է նաև հասանելի դարձնել ու գործնականում կիրառել առկա ռեսուրսները:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակությաննպատակն է պատրաստել հայրենիքը պաշտպանելու պատրաստ, բազմակողմանի զարգացած պատանիներ և աղջիկներ, հնարավորություն տալ պատանիներին բանակ զորակոչվելուց հետո հենքային գիտելիքների շնորհիվ կարճ ժամանակում տիրապետել ժամանակակից զենքին ու ռազմական տեխնիկային: Յուրաքանչյուր պատանի պետք է իրեն պատրաստի այն մտքին, որ զինվորական ծառայությունը պարտադիր է բոլորի համար և ինքը պետք է լինի ֆիզիկապես կոփված, մտավոր և հոգևոր ներուժով, բարոյական վեհ արժեքներով օժտված անձնավորություն: Դպրոցում առարկայի ընդհանուր առաջադիմությունը բարձր է, հիմնականում լավ ևգերազանց գնահատականներով: Աշակերտները

պարբերաբար մասնակցում են արտադպրոցական միջոցառումների՝ Ռազմամարզական խաղեր, Դիպուկ հրաձիգ, առարկայական օլիմպիադա և գրանցում հաջողություններ: Առարկայի շրջանակում անցկացվում են նաև մի շարք հանդիպումներ ու միջոցառումներ՝ «Դասը վարում է սպան», հանդիպում ավագ զինղեկի և տարբեր զորամասերի սպայական կազմի հետ: «Պատիվ ունեմ» և «Պաշտպան հայրենյաց» ծրագրերին հանգամանորեն ծանոթացնելու նպատակով կազմակերվում է հանդիպում Շեֆ-զորամասի ներկայացուցիչների հետ, անցկացվում են տարհանումներ, պատսպարումներ՝ զինելով աշակերտներին տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու և գրագետ վարքականոններ դրսևորելու հմտությամբ:

Տարվա ընթացքում անցկացվում են հիշատակի և ոգեկոչման տարբեր միջոցառումներ ու բաց դասեր նվիրված մերօրյա կենդանի հերոսներին, ինչպես նաև հայ ժողովրդի պատմական անցյալին և հերոսական դրվագներին:

Մանկավարժական խորհրդի առաջարկությամբ նախատեսվում է վերանորոգել ՆԶՊ-ի կաբինետը և փառքի անկյուն կահավորել նվիրված անմահացածշրջանավարտներին:

Դպրոցի տնօրենի կադրային քաղաքականությունը

Դպրոցի տնօրենը իր անձնական վարքով, պատասխանատվությամբ ու արդարամտությամբ օրինակ պետք է լինի սովորողների և մանկավարժական անձնակազմի համար, զուգահեռ կան որոշակի սկզբունքներ, որոնց նա պետք է տիրապետի իր գործունեության արդյունավետ կազմակերպման համար: Հանրակրթություն իրականացնելիս դպրոցի տնօրենը անվերապահորեն պետք է դրսևորի հետևյալ հատկանիշները և սկզբունքները՝

- Պատասխանատվության բարձր զգացում և հետևողականություն
- Պարտաճանաչություն
- Հաղորդակցման հմտություններ
- Առաջնորդի հմտություններ
- Թիմում աշխատելու կարողություն
- Արդարամտություն
- Համագործակցության պատրաստակամություն
- Ճկունություն և արագ կողմնորոշում
- Ստեղծագործական մտածողություն
- Մասնագիտական աճի ձգտում

Դպրոց մտնող ցանկացած ուսուցիչ կամ մանկավարժական աշխատող պետք է լինի օրինակելի, կարգապահ և պարտաճանաչ, քանի որ իր կերպարով նա դերային մոդելէ հանդիսանում երեխայի համար, կարծիք է ձևավորում աշակերտի մոտ շրջակա միջավայրի և հասարակության հանդեպ: Կարևոր է, որ տնօրենի կողմից հետևողական

քայլեր ձեռնարկվեն անձնակազմի կառավարման գործընթացները առավել բարելավելու ուղղությամբ: Ուստի անհրաժեշտ է՝

1. Անձնակազմի գործունեության խրախուսում /պաշտոնական աճ, մասնագիտական վերապատրաստումներ, տարակարգի ստացում, կամավոր ատեստավորում, առարկայական օլիմպիադաներում գրանցած հաջողություններ, մասնագիտական և կազմակերպական խրախուսում, այդ թվում՝ «լավագույն ուսուցիչ», «լավագույն դասղեկ», «լավագույն աշխատող» և այլ անվանակարգերի սահմանում/:
2. Գործածության մեջ դնել ինքնագնահատման հարցաթերթիկը, կատարել վերլուծություններ:
3. Դպրոցի տեսանելի հատվածում ստեղծել աշխատակազմի խրախուսման, նվաճումների ու ձեռքբերումների պատ:
4. Ոլորտի լավագույն մասնագետների հետ փորձի փոխանակման և վերապատրաստան միջոցառումների իրականացում:
5. Մանկավարժական անձնակազմի պարբերաբար վերապատրաստում
6. Կադրերի համալրում՝ ելնելով համապատասխան առարկաների մասնագետների անհրաժեշտությունից:
7. Անհրաժեշտության դեպքում մասնագիտական և մանկավարժականաջակցության տրամադրում:
8. Մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրությունների իրականացում՝ տարեկան կտրվածքով:
9. Նպատակային դասալսումներ, առարկայական չափորոշիչների դիտարկումներ բոլոր մեթոդական միավորումների մասնախմբերում:
10. ՏՀՏ միջոցների կիրառման կարևորում բոլոր առարկաների շրջանակներում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

Յուրաքանչյուր ոք ունի արժևորման, գնահատման կարիք: Ուստի այս համատեքստում կարևորվում է դպրոցում խրախուսման համակարգի ներդրումը, ինչը կնպաստի անձի մտավոր և հոգևոր ընկալումների և դրսևորումների ի հայտ գալուն՝ ներառելով սովորողներին, ուսուցիչներին և ծնողներին ներքոհիշյալ անվանակարգերում՝ պատվոգրերի, շնորհակալագրերի և խրախուսական այլ նվերների տեսքով:

«Լավագույն աշակերտ»

«Լավագույն աշակերտուհի»

«Լավագույն դասղեկ»

«Լավագույն ուսուցիչ»

«Լավագույն ծնող»

Այս ամենը միտված են անձի մեջ ձևավորելու էլ ավելի «պատրաստակամություն», «հանդուրժողականություն», «արժեքային համակարգի ձևավորում», «ինքնակրթության և ինքնազարգացման միջոցով կարողունակությունների բարելավում»:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

ԽՆԴԻՐՆԵՐ

Խթանել ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդների և նորարարությունների կիրառման կարողությունները

Ելնելով ՀՊՉ-ի նոր պահանջներից ուսուցիչների մեջ ձևավորել միավորային,ձևավորող և բնութագրող գնահատման իրականացման հմտություններ

Ուսուցիչների մոտ զարգացնել համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ- ների կիրառումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Պարբերաբար կազմակերպել սեմինար-քննարկումներ,որտեղ փորձառու ուսուցիչները կներկայացնեն իրենց բազմամյա փորձը:
2.Ուսուցիչներին մասնակից դարձնել համացանցային հարթակներում կրթական տարբեր կազմակերպությունների կողմից մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով իրականացվող վերապատրաստումներին
3.Առարկայական մեթոդմիավորումներում քննարկել խնդիրը,բացահայտել կարիքները
4.Տնօրենության կողմից իրականացնել մշտադիտարկում 2-րդ,5-րդ,7-րդ դասարաններում:Իրականացնել դասալսումներ ,արդյունքները քննարկել մեթոդմիավորման նիստերում:

1.Դպրոցում գործող մեթոդմիավորումների նախագահների և տնօրենության հետ կազմակերպել խորհրդակցություններ ,տալ համապատասխան հանձնարարականներ:
2.Մշակել ուսուցանող գնահատման գործիքներ(թեստեր, առաջադրանքներ,հարցաթերթեր49)
3.Ուսուցանող գնահատման արդյունավետության գնահատում:

1.Կազմակերպել էլեկտրոնային կառավարման դասավանդման ապահովման մասնագետի,թվային գրագիտության և համակարգչային գիտության, ինֆորմատիկայի և մյուս առարկաների ուսուցիչների կողմից համատեղ դասեր:

Ներդնել մասնակցային և բազմակարծության գործիքներ մանկավարժների դիրքորոշումները, դիտարկումները ներկայացնելու ուսուցման դաստիարակության և կառավարման ոլորտներում:

Մեթոդական միավորումների աշխատանքների արդյունավետության բարձրացում

ԽՆԴԻՐՆԵՐ

Նախաձեռնություն ընդլայնում

ՏՀՏ միջոցների կիրառում և

Որակյալ ներառական կրթության ապահովում

Նորագույն մեթոդների կիրառում

Ուսուցիչների որակավորման խթանում՝կամավոր ատեստավորում, տարակարգի շնորհում

Երկարօրյա ուսուցումը դպրոցում

Դպրոցում 2022-2023 ուսումնական տարում երկարօրյա ուսուցում չի իրականացվել: Երկարօրյա ուսուցում դպրոցում ներդրվել է 2023-2024 ուսումնական տարվանից՝ նպատակ ունենալով սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերել, աջակցել դասապատրաստումներին, զարգացնել ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները:Երկարօրյա ուսուցում կազմակերպել՝ համաձայն 2020 թվականի հոկտեմբերի 13-ի ՀՀ ԿԳՄՍ նախարարի № 38-Ն հրամանի հավելված 1-ի, հավելված 2-ի համաձայն երկարօրյա ուսուցման կազմակերպման նպատակով հաստատության և ծնողի միջև կնքել պայմանագիր:

Աշակերտների անվտանգության և առողջության պատշաճ պահպանումը ապահովելու ուղղությամբ նախատեսվում է՝

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ապահովել անհրաժեշտ պայմանները:
2. Կանխարգելման աշխատանքներ տանել վնասակար սովորությունների հետ

կապված / ալկոհոլ, ծխախոտ, թմրանյութեր/։
3. Մոնիթորինգ անցկացնել, հայտնաբերել և ուշադրության կենտրոնում պահել՝

- կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված,
- սոցիալական վատ վիճակում գտնվող
- միակողմանի ծնողազուրկ
- երկկողմանի ծնողազուրկ
- ծնողների խնամքից զրկված
- միայնակ մոր խնամքի տակ գտնվող
- հաշմանդամություն ունեցող
- հաշմանդամ ծնողներ ունեցող
- պատերազմում զոհված կամ հաշմանդամ դարձած ծնողներ ունեցող
- կտրուկ վարքային փոփոխության ենթարկված
- բուլինգի ենթարկված

սովորողներին և տրամադրել հոգեբանական աջակցություն։

ՀԱԼԱԾԱՆՔԻ, ՕՏԱՐՄԱՆ, ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Աշակերտներին բռնությունից պաշտպանելու համար պետք է մենք կարգավորենք սեփական հույզերն ու օրինակ ծառայենք նրա համար դրական տեսանկյունից: Պետք է հիշենք, որ մեղադրանքները, սպառնալիքները և պատիժը չեն ապահովի ակնկալվող արդյունք:

Դպրոցական բռնության պատճառները՝

- Ձանձրույթ դպրոցում:

Ձանձրացող աշակերտը ներգրավված չէ ուսումնական պրոցեսի մեջ, նշանակում է հանդիսանում է կարգապահության պոտենցիալ խախտող:

Նրան հետաքրքրելը, ուսմանը մեծ իմաստ հաղորդելը ժամանակակից կրթության գլխավոր խնդիրներից է:

Դպրոցական բռնության դեմ պայքարը ընթանում է մի քանի ուղղություններով, որոնց մեջ ընդգրկված են ինչպես ընդհանուր, այնպես էլ անհատական:

Դպրոցական բռնության հետևանքները՝

- Երկարատև դպրոցական ծաղրանքները ազդում են երեխայի ինքնագնահատականի վրա, երեխան իրեն հալածված է զգում:

- Դեռահասների մոտ դպրոցական բռնությունը առաջացնում է անհատականության զարգացման խանգարումներ:

Բռնության կանխարգելում՝

Դպրոցում տիրող միջավայրը չափազանց կարևոր է բոլոր աշակերտների համար և այն մեծ ազդեցություն է թողնում նրանց հետագա կյանքի վրա:

Դպրոցում առկա բռնությունը՝

- ծեծկռտունքները
- բուլինգը
- լեզվակռիվը
- պիտակավորումը

բացասական ազդեցություն են թողնում բոլոր երեխաների վրա՝ թե՛ բռնության ենթարկվողների և թե՛ բռնություն գործադրողի վրա:

Բացահայտենք պատճառները՝

- Լինել հետևողական
- Համագործակցություն ծնող-աշակերտ-ուսուցիչ
- Բացահայտել դրդապատճառները
- Միջոցներ ձեռնարկել կանխելու երևույթի խորացումը
- Սովորեցնել ինքնապաշտպանվել
- Փնտրել լուծումներ

Դպրոցական հալածանքի առաջացումը լիովին հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ խնդրի բոլոր կողմերը, քանի որ այն հաճախ դիտարկվում է միայն անմիջական հալածանքի ընթացքում:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

ՀՀ Հանրակրթության մասին օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի համաձայն՝դպրոցի տնօրենը ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ կարիքները տրամադրում է վարչատնտեսական մասի համակարգողին՝ պահանջվող ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար:

Բյուջեի բաշխվածությունը %-ներով			
Բյուջե	2021թ	2022թ	2023թ
Աշխատավարձ	82,23	81,9	78,83
Ջեռուցում և էներգիա	4,55	0,366	2,98
Ջուր և ախտահանում	0,33	0,27	0,2
Կապ	0	0,01	0
Տրանսպորտային ծախսեր	0,13	0,09	0,15
Համակարգչային ծառայություն	0,1	0,1	0,13
Վերապատրաստում	0,2	0,18	0
Տեղեկատվական ծախսեր	0	0,02	0,03
Մասնագիտական ծախսեր	0,3	1,83	1,74
Ընթացիկ նորոգում	2,76	4,23	3,22
Մեքենասարքավորումների նորոգում	0,09	0,1	0,07
Գրասենյակային ծախսեր	0,43	0,48	0,4
Առողջապահական նյութեր	0,16	0,21	0,13
Կնեցաղային և սնունդ	4,49	4,47	4,82
Այլ հատուկ նպատակային նյութեր	0,54	0,21	1,72
Այլ ծախսեր	0,54	0,63	0,4
Վերադարձ	0	0,04	0
Գույքի ձեռքբերում	2,15	1,57	5,17
Ֆինանսական միջոցներ	2021թ	2022թ	2023թ
Ընդամենը եկամուտ	92 268 608	95 654 734	74 862 673
Սուբսիդիա	86 972 300	89 189 800	58 229 500
Դրամաշնորհ	700 600	2 052 100	3 406 400
Տարեսկզբի մնացորդ	4 595 708	4 412 834	9 856 773
Դրամաշնորհ կապիտալ			3 370 000

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
✓ Դպրոցի բյուջեի նպատակային և արդյունավետ օգտագործում ✓ Ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկություն ✓ Պետական բյուջեի միջոցներով ուսուցիչների հերթական պարտադիր վերապատրաստումներ ✓ Մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստի արդյունքում սոցիալապես անապահով համակարգում ընդգրկված ընտանիքի	✓ Վերապատրաստումների և աշխատակազմի խրախուսման համար գումար չհատկացնելը ✓ Պետական բյուջեից սահմանափակ ֆինանսավորում ✓ Նյութատեխնիկական բազայի համալրում (կրթական կարիքներ) պետական բյուջեից 2018-2019,2019-2020 ուսումնական տարիներին ուսուցիչների հերթական պարտադիր ատեստավորում չի իրականացվել

երեխաներին դասագրքերի վարձավճարների փոխհատուցում պետական բյուջեից	✓ Դպրոցի գրադարանային ֆոնդը գեղարվեստական գրականությամբ համալրելու միջոցների բացակայություն


2023թ
Աշխատավարձ
Ջեռուցում և էներգիա
Ջուր և ախտահանում
Կապ
Տրանսպորտային ծախսեր
Համակարգչային ծառայություն
Վերապատրաստում
Տեղեկատվական ծախսեր
Մասնագիտական ծախսեր
Ընթացիկ նորոգում
Մեքենասարքավորումների նորոգում
Գրասենյակային ծախսեր
Առողջապահական նյութեր
Կնեցաղային և սնունդ
Այլ հատուկ նպատակային նյութեր
Այլ ծախսեր
Վերադարձ
Գույքի ձեռքբերում
0.4
0
1.72
5.17
0.4
0.13
0.03
1.74
0.07
4.82
0
0.13
3.22
0.15
0
0.2
2.98
78.83

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

- Յուրաքանչյուր գործողության համար մշակված են վերահսկողության մեխանիզմներ, որոնք հաստատվում են խորհրդի կողմից:
- Յուրաքանչյուր գործողության համար սահմանված են հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը, որոնք հաստատվում են խորհրդի կողմից:
- Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից՝ տարեկան առնվազն երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

Դպրոցի հիմնական խնդիրների լուծման ուղիները, պատասխանատուներն ու կատարման ժամանակացույցը

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխանատուներ	Կատարման ժամանակացույց
Թեքահարթակի բացակայություն	Ստեղծել համապատասխան պայմաններ հենաշարժողական ապարատի հետ կապված խնդիրներ ունեցող ԿԱՊԿՈՒ աշակերտների համար	Վարչատնտես. համակարգող	2023-2024թթ
Դպրոցի լիարժեք ու համակողմանի կառավարման համար էական նշանակություն ունեցող փաստաթղթերի բացակայություն	Ուսումնադաստիարակչական պլանի, ներդպրոցական վերահսկոության պլանի, ներքին գնահատման մշակում ու հաստատում	Տնօրեն Տնօրենի տեղակալ Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ	2023թ օգոստոս-սեպտեմբեր

Բացօթյա մարզահրապարակի բացակայություն	Դպրոցի հարակից տարածքի բարեկարգում, բացօթյա մարզահրապարակի կահավորում	Վարչատնտես. համակարգող	2024թ հունիս-օգոստոս
Ոչ լիարժեք օգտագործվող համակարգչային սենյակ	Առանձնացնել Արմաթ լաբորատորիան և համակարգչային սենյակը	Վարչատնտես. համակարգող	2023թ սեպտեմբեր-հոկտեմբեր
Կահավորված ու հարմարեցված ՆԶՊ կաբինետի բացկայություն	ՆԶՊ դասասենյակի տրամադրում, վերանորոգում և կահավորում	Վարչատնտես. համակարգող ՆԶՊ ուսուցիչ	2024թ հունվար
Ավագ օղակում առաջադիմության նվազում	Պարբերաբար աշխատանք տանել սովորողների հետ նրանց մոտ կրթության կարևորության ընկալումը բարձրացնելու համար: Կազմակերպել հանդիպումներ տարբեր ոլորտի կայացած ու հաջողությունների հասած անձանց հետ, որոնք կհանդիսանան դերային մոդել և կխրախուսեն բարձրագույն կրթություն ստանալ և հաջողությունների հասնել	Տնօրեն Տնօրենի տեղակալ	2023-2028թթ

Ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարելավում	1. Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊՉ-ի փոփոխություններինև դրանից բխող ծրագրային, առարկայական չափորոշիչներին և մեթոդաբանությանը:	Տնօրեն Տնօրենի տեղակալ	2023-2024թթ
	2 Պարբերաբար մասնագիտական վերապատրաստումներ ապահովել ոչ միայն ուսուցիչների, այլև ուսուցչի օգնականների, հոգեբանի համար		2023-2028թթ
Շրջանավարտների խորհրդի բացակայություն	Ծնողների և համայնքի օգնությամբ հնարավորության դեպքում ստեղծել Շրջանավարտների Խորհուրդ	Տնօրեն Շրջանավարտներ Ծնողներ Համայնքի ներկայացուցիչներ	2024-2025թթ
Ծնող-դպրոց համագործակցության պասիվություն	Ակտիվացնել համագործակցությունը ծնողների հետ, կարևորել ծնողների դերը դպրոցի կառավարման գործում	Տնօրեն ծնողական խորհուրդ	2023-2028թթ
Ժամանակակից պահանջներին չհամապատասխանող նյութատեխնիկական բազա	Ձեռք բերել 1. Ժամանակակից լաբորատոր գույք 2. էլեկտրոնային գրատախտակ 3. դասասենյակային գույք 4. մարզական գույք	Տնօրեն Վարչատնտ համակարգող	2023-2028թթ

Փոխարինման ենթակա պատուհաններ	Դպրոցում առկա, փոխարինման ենթակա, ոչ բարվոք վիճակում գտնվող պատուհանների փոխարինում եվրոպական արտադրության ջերմամեկուսիչ պատուհաններով	Վարչատնտես. համակարգող	2023-2026թթ
Ոչ լիարժեք գործող սանհանգույցներ	Վերանորոգել սանհանգույցները	Վարչատնտես. համակարգ ող	2023-2025թթ
Մարզադահլիճի ներքին հարդարման բացակայություն	Կոսմետիկ վերանորոգել մարզադահլիճը	Վարչատնտես. համակարգ ող	2023-2026թթ
Առարկայական օլիմպիադաներին մասնակցության պասիվություն	Դպրոցում ստեղծել առարկայական օլիմպիական խմբակներ	Տնօրեն Մ/Մ նախագահներ	2023-2024 թթ
Ժամանակակից պայմաններին չհամապատասխանող գրադարան	Դպրոցի գրադարանը համալրել մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ Ավելի գեղեցիկ ու գեղագիտորեն հաճելի ընթերցասրահ կահավորել՝ աշակերտներին մոտիվացնելու համար	Տնօրեն Գրադարանավար Աշխատակազմ Ծնողական համայնք	2023-2025թթ

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

Հնարավոր ռիսկերի պլանավորումը խիստ կարևոր է դպրոցի զարգացման ծրագրի իրագործման համար: Ծրագրի իրականացումը իրատեսական չի լինի առանց ռիսկերի գնահատման և դրանց չեզոքացմանն ուղղված իրատեսական քայլերի իրագործմանը՝ նպատակ ունենալով հետևողականորեն իրագործել ծրագրային դրույթները:

Ռիսկեր	Ռիսկերի ազդեցությանն ուղղված գործողություններ
Ոչ բավարար ֆինանսական միջոցներ	Դիմել տարբեր դրամաշնորհների: Ձառնարկատիրություն առարկայի շրջանակում կազմակերպել ցուցահանդես-վաճառքներ: Համագործակցել բարեգործական կազմակերպությունների հետ:
Վարչական աշխատակիցների էլեկտրոնային փաստաթղթեր մշակելու և ստեղծելու հմտության բացակայություն	Համապատասխան դասընթաների կազմակերպում և իրազեկում
Ուսուցիչների պասիվություն	Մրցակցային առողջ մթնոլորտի ապահովում, խրախուսական միջոցների կիրառում
Աշակերտների պասիվություն	Նախասիրությունների բացահայտում և մոտիվացում
Ծնող-դպրոց համագործակցության պասիվություն	Ծնողական համայնքի դերի արժևորում և դպրոցի կառավարման համակարգում տեղեկացվածության և ակտիվ ներգրավվածության բարձրացում

Ամփոփելով ներկայացնենք այն արդյունքները, որոնք ակնկալում ենք գրանցել վերոնշյալ ծրագրային փաթեթի իրականացումով։

Դպրոցը կլինի.

- նյութատեխնիկական բազայով հարուստ
- հարմարավետ ու վերանորոգված
- գիտակ ու վերապատրաստված մասնագետներով ապահովված,
- ժամանակի պահանջներին համապատասխան խմբակներով համալրված,
- առողջ մրցակցային մթնոլորտում զարգացող, համագործակցող կառույց միշարք ՀԿ-ների ու հիմնադրամների հետ։

Աշակերտները կլինեն.

- մարդասիրության, հայրենասիրության ոգով դաստիարակված,
- ազգային, հոգևոր-մշակութային արժեքները կարևորող, պահպանող և տարածող,
- մասնագիտական կողմնորոշում և ինքնուրյուն մտածողություն ունեցող,
- աշխատանքային շուկայի պահանջներին համապատասխան, առօրյակյանքում անհրաժեշտ կարողություններով ու հմտություններով զինված,
- Նոր Հայաստանի հանդեպ պարտքով ու պատասխանատվությամբ լցվածհպարտ քաղաքացիներ։

Դպրոցի զարգացման ծրագրից ակնկալվող արդյունքները

1. Ավելի գրագետ ու կարողունակ աշակերտական հանրույթ
2. Տարբեր առարկայական օլիմպիադաների և մրցույթների ակտիվորեն մասնակցող և հաջողություններ գրանցող աշակերտներ
3. Ժամանակակից և որակյալ կրթություն
4. Ավելի գիտակ ու պատրաստված մանկավարժական հանրույթ
5. Կբարելավվի ուսուցիչների մասնագիտական և նախաձեռնողական որակները
6. Կձևավորվի շրջանավարտների խորհուրդ
7. Ավելի ակտիվ համագործակցություն կձևավորվի խորհրդակցականմարմինների միջև

8. Կամրապնդվի ծնող-դպրոց-ուսուցիչ-աշակերտ կապը

9. Դասապրոցեսը կհագենա ՏՀՏ միջոցներով, ավելի ինտերակտիվ, մոտիվացնող գործիքակազմի կիրառմամբ

10. Նյութատեխնիկական բազայի հարստացման արդյունքում կապահովվի ավելի հետաքրքիր և արդյունավետ դասերի անցկացումը, ինչը կրկին մոտիվացնող խթան կհանդիսանան թե՛ ուսուցիչների, թե՛ սովորողների համար

11. Կձևավորվի ավելի իրավագիտակից ու կայուն անհատ

12. Կմեծանա դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր սովորողի և իր ընտանիքի վերաբերմունքն ու պատասխանատվության զգացումը

13. Կձևավորվի 21-րդ դարի մտածող, ստեղծագործ, կարողունակ և արժեհամակարգ կրող քաղաքացի

Անհրաժեշտ է մաքսիմալ հետևողականություն դրսևորել և սահմանված ժամկետներում իրականացնել բոլոր նախատեսված աշխատանքները, եթե չեն առաջանում անհնարինության հասնող սպառնալիքներ:

Զարգացման ծրագիրը ենթակա է լրամշակման և փոփոխման՝ ելնելով ժամանակի պահանջներից և իրավիճակներից:

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողությունը

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Իբրև գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին և արտաքին գնահատման արդյունքներն ու վերլուծությունը պետք է հիմք հանդիսանան կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: